

Арм $\frac{1}{1599}$

ХИМНИ

~~24 495~~
~~246~~

APM 1/1599

8827579



2014079136

б. обр.

Книга имеет:

Печатных листов	Выпуск	В переплетн. един. соедин. №№ вып.	Таблиц	Карт	Иллюстр.	Служебн. №	Наклад и исписка
5							954



~~1195
240~~

ԵՌԵՋՆՈՐԴ

ՕՆՈՂԵՑ

Apr 1/1599

Որ կրցուցընէ թէ ճնողքները ինչ կերպով
իրենց զաւակները պիտի կրթեն :



Խրատեա՛լ զարդի սո, Ի հանգուսցէ պէտք :
Եռակ. իԹ. 17 :

1599



ՅԻ ԶՄԻՒՌՆԻՆ

Տպագրութեամբ Հօման Հայրօքի :

1838



34-5684

Руководство
родителям по воспитанию
и развитию детей
Смирная, 1938

ԵՌԵՋՆՈՐԴ

ԾՆՈՂԵՑ

Եթիւ մէկ մարդ մը ճամբորդութիւնը նել կուզէ հարաւային Միւրիկէի կողմերը՝ ուր տեղ որ կը գտնուի շատ վայրենի ու պատառող գազաններ, ու կուզէ երթալ ան երկիրին ներսի կողմերը պըտըտել, արգարև իր ապահովութեանը համար շատ պիտի ուզէ մէկ առաջնորդ մը՝ որ երկրին բնութիւնը, ու ան սոսկալի գազաններուն ռեզվանքը՝ և ինչ կերպով մարդիկը փառատելին գիտնայ, և ուրիշ աս տեսակ բաներուն վրայօք աղէկ տեղեկութիւն ունենայ :

Ճիմայ եթէ մէկ ճանապարհորդ մը բոլոր աս բաները գիտնալով ըսէր՝ “Աս ամենեին մէկ բանէ մըն ալ չեմ վախնար, ու կրնամ երթալ առանձին, և մէկն ալ չեմ ուզեր՝ որ ինձի առաջնորդ ըլլայ”, անատենը ամէն մարդ անոր կամ յիմար է պիտի ըսէր, կամ շատ անմիտ :

Ասանկ ալ երբոր տղաքը աս աշխարհս կուզան, անոնք ճանապարհորդներու կը-

Նմանին, որ կրմտնան մէկ վայրենի ու անապատ երկիր մը՝ որուն մէջը շատ տեսակ կատաղի ու պատառոզ գազաններ կան. անոր համար անոնք շատ կարօտ են մէկի մը որ միշտ իրենց հետը երթայ, ու առաջնորդէ անոնց ամէն իրենց ճամբաներուն մէջ, ու բոլոր վտանգաւոր ճանապարհներէն հեռու պահէ:

Գարձեալ գիտենք որ՝ տղաքը գրեթէ ըստ մեծի մասին չեն գիտեր դալու փորձանքները, ու անանկ կրկարծեն որ բոլորովին իրենք կարող են ինքըզինքնին պահպանելու, և չեն ալ ուզեր որ մէկը իրենց առաջնորդէ, հապա աւելի կուզեն իրենց յատուկ ճանապարհը երթալ: Մտիկա քիչ մը իրենց տգիտութենէն յառաջ կուգայ, ու քիչ մ'ալ հպարտ ու յանձնապաստան սրտէ մը, որնոր գրեթէ բոլոր մարդիկ շատ կամ քիչ ունին: Մտոր համար խիստ հարկաւոր է միշտ զգուշութեամբ հոգ տանել ու հսկել տղայոց վրայ, ու նաև պէտք է բոլոր վտանգներէն զգուշացունել անոնք. և թող չիտալ իրենց կամացը հետևիլ, հապա միշտ ուղղել շիտակ ճանապարհին մէջը: Մտ հարկաւոր պաշտօնը Մտուած ծնողներուն տրւաւ, ու անոնք իրենց տղոցը վրայ վերակացու դրաւ, ինչպէս որ հրամայված է աւ.

նոնց թէ, “ Հայրեր՝ սորվեցուցէք ձեր տղոցը՝ որ ճամբան պէտք են երթալ, որ երբոր ծերանան՝ անկէ չի զատվին”: Եսանկալ տղոցը պատուիրված է. “ Պատուէ քու հայրդ ու մայրդ. որ քու օրերդ երկար ըլլայ ան երկրին մէջը, որ հէրը՝ քու Եստուածդ քեզի կուտայ”: Արկին կըսէ, “ Տըղաք հնազանդ եղիք ձեր ծնողացը հէրովինչու որ անիկա է արժանը”:

Ուստի պէտք է որ ամէն ծնողք գիտնայ թէ ինքը մէկ յատուկ հոգաբարձու մըն է Եստուծոյ իր տղոցը վրայ: Եստուած աս հոգը իրեն յանձնեց. որ քանի զաւակ ունենայ՝ եթէ մէկ և եթէ աւելի, ինչպէս որ պէտք է նէ զգուշութեամբ առաջնորդէ անոնց. ինչու որ մէկ ծնողք մը պէտք է գիտնայ թէ ինչ կերպով իր տղոցը կառաջնորդէ ու անոնք կրկրթէ նէ աս սոջսարհիս մէջ, եթէ աղէկ և եթէ գէշ, նոյնը կրնդունին յաւիտենականութեան մէջ. ու նաև ինչ վիճակի մէջ ըլլայ իրենց մահկանացու մարմիննին, նոյն հատուցումը կրնդունին իրենց անմահ հոգինին:

Առաջին հարցումը որ ամէն ծնողք պարտիրնել, աս է. Եստուած ինչ կրպահանջէ ինձմէն որ ընեմ աս անմահ էակին, որնոր ինքը իմ հոգաբարձութեանս յանձնեց:

Ամէն ծնողք աս աշխարհիս մէջ ամէն
 պէտք եղած բաները իրեն տղոցը համար
 կուզէ պատրաստելու, ու գիտէ որ աս բա-
 ները ընելը իրեն մէկ յատուկ պարտքն է :
 Ու թէ որ մէկը զանց կրնէ իր պարտքը կա-
 տարելու իր տղոցը վրայ, բոլոր աշխարհ ա-
 նոր դէմ կըզրուցէ : Թէ որ մէկ մարդ մը կա-
 բող է, ու չի պատրաստեր կերակուր ու
 հանդերձ իր ընտանեացը, և հոգ չի տանիր
 որ իր տղաքը օգտակար գիտուածիւններ կամ
 արհեստներ սորվին, հապա կըձգէ անոնք որ
 դատարկ ու տգիտուածեան մէջ կըմեծնան,
 ու կարող չեն ըլլար իրենց օրական ապ-
 բուստը ձարելու, և աս աշխարհիս մէջ երե-
 լի մարդիկներ ըլլալու ճամբան գիտնալ,
 ամէն մարդ կըզգայ որ անիկա իր տղոցը շատ
 գէշ կրնէկոր : Աւ եթէ այսչափ մեծ պար-
 տաւորութեանց տակ են ծնողքները իրենց
 զաւկրներուն մարմնաւոր պակսութիւն-
 ները հոգալու համար, որչափ ևս առաւել
 անոնց հոգևոր պակսութիւններուն հա-
 մար, որոնց հոգիները յաւիտեան չեն մեռ-
 նիր : Ամէնէն հարկաւոր բանը աս է, որ տը-
 ղաքը պարտին սորվիլ իրենց ծնողացը խո-
 ըին հնազանդութիւն ունենալ, իրենց եր-
 ջանկութեանը համար՝ թէ աս աշխարհիս
 մէջ, և թէ գալու աշխարհին մէջ :

Թէ որ տղայ մը իր ծնողացը չի հնազանդիր, անիկա չի կարծրվիր որ հաւատարմութեամբ առուտուրի մը կամ արհեստի մըն ալ պարապի: Թէ որ ինքը չի հնազանդիր անոնց՝ որ Մատուած իր վրայ վերակացու դրաւ, չի կարծրվիր որ անիկա աշխատասէր, կամ հաւատարիմ, կամ յառաջադէմ ըլլայ մէկ գործի մը մէջ: Եւ մանաւանդ եթէ անիկա չի հնազանդիր իր ծնողացը, Մատուծոյ ալ չի պիտի հնազանդի, ու իր արքայութիւնը երթալու յարմար չի պիտի ըլլայ: Մնահնազանդութեան ճշմարիտ պտուղը աս է, որ եթէ մէկ տղայ մը իր ծնողացը չի հնազանդիր, անիկա Մատուծոյ ալ չի հնազանդած կըլլայ. ինչու որ Մատուած ըսաւ. «Տըղաք՝ ձեր ծնողացը հնազանդ եղիք Տէրով, ինչու որ անիկա է արժանը»: Ու թէ որ մէկ տղայ մը Մատուծոյ պատուիրանքներուն մէկին չի հնազանդի, անիկա բոլոր միւսներուն ալ չի պիտի հնազանդի՝ երբոր պատեհութիւն ունենայ: Մ, ս մտածմունքները ծնողաց պարտաւորութիւնները շատ կըծանրցունեն, որոնք աղէկ խորհելու արժանաւոր բաներ են: Եւ սակայն չի կայ մի արդեօք անանկ ծնողքներ՝ որ գրեթէ ամենեին իշխանութիւն չունին իրենց տղոցը վրայ, ոչ ալ կըթուութեան կամ վարժութեան հա-

մար ամենեին մէկ կանոն մը կամ կերպ մը :
 Աւանանկ շատերը չի կան մի որ ամենեին
 իրենց կեանքերնուն մէջը կէս ժամի չափ
 չեն նստիր ու խորհիր թէ՛ արդեօք իրենց
 տղոցը վրայ ունեցած բարոյական պարտ-
 քերնին որն է , ու ի նչ կերպով կրնան իրենց
 պարտքերը աղէկ կատարել : Այլ թէ մէկ
 մարդ մը աս հարկաւոր գործքերուն մէջը ա-
 սանկ է , բոլոր ուրիշ գործքերուն մէջն ալ
 անկատար կը լայ : Բայց ուր տեղ որ աշխա-
 տու թիւն ու ջանք հարկաւոր է , ան տեղը ա-
 ուաւել պէտք է մէկ կանոն մը կամ կերպ մը
 ըլլալ , ու հաստատուն պահվիլ իրենց միտ-
 քերուն մէջը . հապա թէ չէ ամենեին յոյս
 չի կայ որ մէկ երեւելի բան մը կատարվի :
 () րինակի աղագաւ՝ թէ որ մէկ մարդ մը
 սկըսէ տուն մը շինել առանց գաղափար մը
 ունենալու իր միտքին մէջը , թէ ինչ ձև կամ
 ինչ տեսակ պիտի ըլլայ իր տունը . կամ թէ
 ինչ նիւթով պիտի շինվի . փայտէ՞ եւ թէ
 քարէ . կամ թէ քանի՞ մարդ պէտք է ան
 տեղը , ու ամէն մէկը օրը որչափ ժամանակ
 պիտի աշխատի , կամ թէ ամէն մէկը ինչ
 պարտի ընել , և այլն . արդեօք երբ կարծենք
 թէ ան մարդուն տունը պիտի լըմընայ :
 Ամէն արհեստաւոր ինչ արհեստի մէջ որ
 ըլլայ իր մտքին մէջը մէկ յատուկ գաղափար

մը ունի իր գործքերուն վրայով , թէ և իր
 շինած բանը չնչին բան մը ըլլայ , ինչպէս
 մէկ տփնեակ լէ-լէ մը . ապա ուրեմն ինչ-
 պէս կրնայ ըլլալ որ մէկ ծնողք մը , որուն
 գործը անմահ միտքերը վարժել է , ամենև-
 ին մէկ գաղափար մը չունենայ իր միտքին
 մէջը : Գնահ տփնեակ շինողին երբոր կաւը
 շաղված ու իր առջին դրած է , ու հարցուր
 անոր թէ ինչ կերպով տփնեակ պիտի ձևա-
 ցունէ անիկա , և ինքը կարող պիտի ըլլայ
 ինչ կերպով ըլլալը մէկիկ մէկիկ քեզի գրու-
 ցել . անանկ որ՝ գիտես թէ բոլորովին իր
 մտքին մէջը գրված է . և վերջապէս սկիզ-
 բէն մինչև վերջը առանց տարակուսելու
 բոլորը քեզի պիտի պատմէ :

Հիմայ գնահ մեր ազգին ծնողքներուն , ու
 հարցուր թէ ինչ կերպով անոնք իրենց
 տղոցը հնազանդութիւն ու արդարութիւն
 պիտի սորվեցունեն . ու նայէ թէ անոնցմէ
 քանին քու հարցումիդ կրնայ մէկ ստոյգ
 պատասխան մը տալ : Արդարև անոնք կու-
 ղեն որ իրենց տղաքը զգաստ ու հնազանդ
 ըլլան , ու աղէկ կրթըվին . բայց անիկա
 ինտոր ընելը ամենևին չեն գիտեր : Երիբ
 չէ մէկ քեզ հանուր ու անորոշ դիտաւորու-
 թիւն մը ունենալ իրենց զակրները իրենց
 հնազանդ ընելու , ու անոնք անանկ կեր-

պով մը մեծցունելով որ օգտակար ու երջանիկ ըլլան, հապաս գիտաւորութիւնը իրօք կատարելու համար բացարձակապէս հարկաւոր է մէկ մասնաւոր գաղափար մը կամ կանոն մը ունենալ :

Արդ՝ աս փոքրիկ գիրքիս գիտաւորութիւնը աս մասին ծնողքներուն օգնութիւն հասնել է . և կրխնդրենք որ Աստուծոյ օրհնութիւնը աս մեր խոնարհ աշխատասիրութեանը վրայ ըլլայ, ու ասիկա կարգացող բոլոր ծնողքներուն Տէրը առաջնորդէ ան ճամբովը իրենց զաւկրները կրթելով որուն ինքը պիտի հաճի, և իրենց զաւկրները ժամանակաւոր ու յաւիտենական բարիքներով պիտի օրհնէ :

Առաջին բանը որուն վրայ պիտի խօսիմ, աս է . Ծնողքները իրարու հետ միաբան պարտին ըլլալ :

Ետ անգամ կրպատասխի որ մէկ հայր մը ուրիշ կերպ ընթացք մը ունի իր զաւկրները կառավարելու, ու մայրը ուրիշ . ըսենք թէ հայրը կրպատժէ տղան, բայց մայրը կրպագնէ . հայրը միշտ հնազանդութիւն կրխնդրէ, բայց մայրը բոլոր յանցանքները զանց կրնէ ու ամէն բան կրնէրէ : Աս կերպ ընթացքը բոլորովին կործանում է տղոց . տղան շուտով կըսորվի իր մօրը վազել իր

պահպանու թեանք համար՝ երբոր հայրը
 պատժելու ըլլայ զինքը, միշտ ապահով
 ըլլալով՝ որ իր մայրը իր վսայ գութ ունի,
 ու ինքը կրմեղքընայ: Աս բանիս գէշու-
 թիւնը էվելք յայտնի ցուցընելու համար
 օրինակ մը դնենք: Մտենք թէ տղին մէկը
 հայլին ձեռքը կառնէ, ու կըսկըսի անոր
 հետը խաղալ. հայրը ձեռքէն կառնէ ու
 կըտանի տեղը կըդնէ, ու տղին ալ կըսէ թէ
 անիկա մէկ խաղալիկ բան մը չէ, ինչու որ
 շուտով կըկոտորի. հիմայ տղան լալով իր
 մօրը վրայ կըվազէ, ու մայրն ալ մեղքընա-
 լուն նորէն հայլին վար կառնէ ու անոր
 ձեռքը կուտայ, և կըսէ թէ մեղքը չէ՞ մի որ
 իմ տղաս տսանկ լայ: Հիմայ հօրը բոլոր
 ջանքերը որ պիտի սորվըցունէր անոր թէ
 որ բանը պէտք է ընել, ու որ բանը չընել,
 անմիտ մօրը ասանկ ընելովը ոչինչ կըլլայ.
 ու տղան ալ շատ գէշ կըլլայ:

Արիշ օրինակ մըն ալ դնենք: Մտենք թէ
 փոքրիկ աղջիկ մը իր հօրը անհնազանդու-
 թիւն ընելով յանցաւոր կըլլայ, ու հայրը
 անիկա կըպատժէ ըրած յանցանքին համար.
 բայց մայրը մեղքընալով կաղաչէ որ ան
 փոքրիկ աղջկանը չի վնասէ, ու հազարումէկ
 պատճառներ յառաջ կըբերէ անիկա ար-
 դարացունելու համար. և գուցէ աղջիկը

կառնէ մէկ դի կըտանի ու կըսէ թէ, “Վ. ու
Տայրդ գէշ մարդ մըն է որ քեզ ասանկ կը-
պատժէ”. ու անոր քիչ մը անուշ բաներ
տալով անիկա կըխաղաղէ, ու ասանկ՝ մօրը
ըրած անկարգութիւնովը պատիժին ընելու
բոլոր օգուտները իսպառ կըխափանվին :

Այն ուրիշ օրինակ մըն ալ գնենք: Մսենք
թէ տղայ մը յանցանք մը կընէ. ու մայրը ա-
նիկա կըպատժէ ու կարգիլէ սեղանը հացի
գալու, բայց անոր անխոհմ հայրը կըսէ թէ,
“Մտորումութիւն է որ տղան անօթի մնայ”.
ու կըհրամայէ սեղանը գալ. հիմայ հայրը ա-
սանկ տղիտութեան մէջ իյնալովը, մօրը՝
իր տղին վրայ ունեցած իշխանութիւնը ու
զօրութիւնը բոլորովին կաւրէ: Մսանկ դի-
պուածներու մէջ շատ անգամ կըպատահի
որ ծնողքները իրենց տղոցը առջևը մէկ կը-
ռիւ մը կըհանեն. և աս ճամբովը իրենց
իշխանութիւնը զուկըններնուն վրայէն եր-
թալէն՝ ի զատ, երբեմն ընտանիքի մը մէջ
մէկ երեւելի կռիւ մը կեղէ, կարելի է թէ մէկ
պղտի բանի մը համար: Յայտնի է ամէն
մարդու, թէ աս կերպ զուակ կառավարելը
անանկ գէշ է, որ ամենեին պէտքը չէ ըլլալ.
ու նաև աս կերպով տղաքը բոլոր գէշ բա-
ները կըսորվին, բայց հնազանդութիւն ա-
մենեկի՝ չեն սորվիր: Տղայ մը երբոր կը-

պատժըվի, (հոգ չէ որչափ յանցաւոր ըլլայ, կամ որչափ պատիժի արժան ըլլայ,) ինքըզինքը ոչինչ տեղը պատժըված կրկարծէ, երբոր մէկ ծնողքը մէկալին ըրածին դէմ բան կրնէ: Անչպէս ըսենք թէ հայրը իր տղան կրպատժէ, ու մայրը կերթայ ինքըզինքը մէջ ձգելով անիկա կաղատէ. ուստի տղան մօրը ասանկ ընելովը կրկարծէ թէ ինքը անիրաւ տեղը կրպարժըվէրկոր. ու ան պատիժին վախճանն ալ տղին մէկ օգուտ մը չի կրնար ընել: Ասկէ՛ի զատ երբոր կրտեսնայ տղան՝ որ իր հայրը ու մայրը իրարու հետ կռիւ կրնեն, ինքն ալ կրսորվի կռիւ ընել իր եղբայրներուն ու քոյրերուն հետ, թէ որ ունինէ:

Օնողքները իրենց զաւկրներուն վրայ առանձին իշխանութիւն մը ունենալու համար՝ առաջին հարկաւոր բանը աս է, որ անոնք իրարու հետ միաբան ըլլան, անանկ որ մէկը՝ միւսին ըրածին դէմ չընէ: Աս բանիս համար աղէկ է որ անոնք մինակ եղած ժամանակնին շատ անգամ մէկզմէկու հետ խօսին թէ ինչ է օրինաւոր կերպը զաւակներունին կրթելու, ու անանկ իրարու հետ միաբանին, որ չըլլայ թէ իրենց տղոցը յառաջագիմութեանը վրայօք մէկզմէկու ներհակ բան ընեն: Աթէ անանկ պատասխի որ մէկ

ծնողք մը իր տղան պատժէ, և միւս ծնողը
 խորհի որ անիկա պատժը վեղու արժանի
 չէր. կամ թէ մէկ տղայ մը անկանոն բան մը
 ընել կուզէ իր կամքին հաճելի, ու հայրը
 կամ մայրը կը շնորհէ անոր ան բանը ընել,
 պէտք է շատ զգուշանան, ու իրարու բան
 մը չի զրուցեն ան բանին վրայօք իրենց տը-
 ղոցը առջևը, բայց տղաքը պառկելէն ետև
 կամ թէ ուրիշ ատեն մը երբոր առանձին
 են, պէտք է որ համեստութեամբ մէկզմէկու
 հետ նոյն բանին համար իրենց ունեցած
 տարբեր կարծիքներնուն վրայօք խօսին, և
 ասանկ մէկզմէկու միտք աղէկ հասկընալով՝
 ուրիշ ժամանակ աս դժուարութիւնները
 չի պիտի ունենան: Սակայն պէտք է խոստո-
 վանիլ՝ որ երբեմն մայրը բանաւոր պատճառ
 մը կ'ունենայ մէջ մտնալու ու ազատելու իր
 տղան հօրը ձեռքէն, երբոր հայրը իր տղին
 սաստիկ բարկանալով ինչ ընելը չի գիտեր,
 ու ամենեին հոգ չընէր թէ արդեօք ո՛ւր տե-
 ղին կը զարնէկոր, անանկ որ տղին կեանքը
 անգամ վտանգի մէջ է: Ըստեօակ մարդ-
 կանց կըսվի գազանային մարդիկ. երբեմն
 շուները (թէպէտ հազիւ թէ) իրենց ձագե-
 րուն հետը ասանկ անխնայ կերպով կը վար-
 վին: Աւ կան կենդանիներ ալ՝ որ իրենց ձա-
 գերը կը մեռցընեն ու կուտեն: Սակայն ա-

նոնք բանականութիւն չունին, ու իրենց ա-
 խորժակը իրենց կրտիրէ. բայց ընդհանրա-
 պէս կենդանիները իրենց ձագերուն վրայ
 շատ սէր կունենան: Մն մարդը որ իր տղին
 վրայ կրբարկանայ, ու կիրքը ելած անոր
 կեանքը կամ անդամները վնասելու չափ
 կրծեծէ անիկա, մէկ անասունէ մըն ալ գէշ
 է, ու մէկն ալ չի մեղադրեր ան մայրը՝ եր-
 բոր կրջանայ իր տղան ասանկ մէկ մարդու
 մը ձեռքէն առնել, իբրև թէ անտառներուն
 մէջը պատառող գազաններուն մէկին բեր-
 նէն առնելու պէս: Նոողաց կիրքերուն
 բարեխառնութեանը վրայօք՝ որով պար-
 տին իրենց տղաքը կրթել, պատիժներուն
 գլխուն մէջը առաւել պիտի խօսվի: Մտեղը
 միայն աս կրսեմ որ, մէկ ընտանիքի մը
 մէջ քիչ միաբանութիւն ըլլալ կրյու-
 սացվի, ուր որ ծնողքներուն մէկը ինքը-
 զինքը կառավարելու այնչափ կարող չըլ-
 լայ՝ որ իր ծնողական քաղցրիկ գութը կամ
 զգացումը կորսնցունէ, ու նաև մոռնայ
 թէ ինքը մէկ մարդ մըն է:

Արկրորդ բանը որուն վրայ պիտի խօ-
 սիմ, ծնողաց հաստատ ու միօրինակ ըլ-
 լալն է:

Մէկ ծնողք մը որ կակուղ սիրտ ունի,
 միշտ ցաւ կիմանայ իր տղան պատժած ժա-

մանակը . ասոր համար շատ ծնողքներ՝
մանաւանդ մայրերը միշտ պատրաստ են
պատճառ մը գտնալ՝ զակերներնին պատ-
ժելու պարտաւորութիւններնուն փախչե-
լու համար :

Երբոր մէկ տղայ մը յանցանք մը կրնէ ,
ու մայրը դիտէ որ անիկա պատիժ կրելու
արժանի է , բայց աղէկ մտաց որոշում չու-
նենալուն՝ տղան առանց պատիժի կանցնի :
Ես տեսակ տկար ու անխորհուրդ ներում
ներով հազար հազարոց տղաքներ գէշ եղեր
են . մայրը պէտք է միշտ դիտնայ որ թէպէտ
պատիժը իր տղոցը ցաւ կուտայ , բայց եր-
բոր անոնք պատժը վելու արժանի են ու չեն
պատժը լիր , աս զանցառութիւնը ալ աւելի
ցաւերու կը պատրաստէ անոնք : Համրան-
քը չի կայ ան տղոց՝ որ անհնազանդու-
թեամբ ու իրենց կամքերնուն հետեւելով ,
ինչպէս ապերժանիկ եղեր են , և ինչ թըշ-
ուառութեանց մէջ ինկեր են : Ուստի պա-
տիժը անգթութիւն մը ըլլալուն տեղը՝ ո-
ղորմութիւն մը կը ստեղծուի անոնց , որովհետեւ
հետագայ նեղութիւններուն շատերէն կը
փրկէ անոնք : Եսոր համար ծնողքները
պարտին շատ հաստատուն ըլլալ իրենց
պարտաւորութիւնները կատարելու . որ
քիչ աշխատութիւնով շատ օգուտ ընեն :

Ասկերպովս իրենց զակրները շուտով կրնան օրինաւոր կրթութեան տակ բերել . բայց եթէ աս հաստատութիւնը չունենան բոլոր տարի աշխատին նէ, ոչինչ բան է : Արբոր մէկ տղայ մը յանցանք մը կրնէ, և գիտէ որ հնազանդութեան դէմ է ըրածը, ան ժամանակը ոչ անոր լալը, ոչ ան բանը մէյմալ չընելու խոստանալը, և ոչ ծնողաց սրտին փափկութիւնը պէտք է անիկա պատիժէն խալըսցունել . ինչու որ եթէ անատենը առանց պատիժի անցնի, ուրիշ ժամանակ կրկին պիտի ընէ նոյն բանը : Ասակայն ասանկ դիպուածներու մէջ՝ որչափ անգամ կը լսենք որ ծնողքները իրենց տրղոցը կըսեն, “Թէ որ ատ բանը կրկին ընես, ստոյգ քեզ պիտի պատժեմ” :

Տղան կրկին նոյն անհնազանդութիւնը կրնէ . ծնողքն ալ նոյն խօսքը կրկին կըսէ, բայց իր մտքին վրայ հաստատուն չէ ըսածը կատարելու : Այլ եթէ որ երբեմն անիկա պատժէ ալ նէ, ան պատիժը միշտ քիչ զօրութիւն կունենայ անոր վրայ, և կամ բոլորովին ոչինչ տեղը կերթայ կանոնաւոր չըլլալուն համար : Այլ եթէ մէկը ինծի հարցունէր թէ՞ աղէկ ընտանեկան կառավարութեանը մէջ խիստ հարկաւոր ու երևելի բանը որն է, պատասխան պիտի տայի թէ՞,

Արժուծեան միօրինակ ըլլայը : Չեմ
 ըսեր սաստիկ պատիժներ տալու է տղին .
 պատիժին սաստկութիւնը չէ՛ որ անոնք կը-
 հնազանդեցունէ , հապա անոր շարունա-
 կութիւնը : Ամէն ծնողք պէտք է մէկ կանոն
 մը ընէ իրեն , ու ամենեին անկէ չի զատվի՛
 ինչ բանի մէջ որ ըլլայ , թէ իրեն զաւակը
 պէտք է որ միշտ հնազանդ ըլլայ : Ահա
 մէկ կանոն մը , որուն պարտին միշտ հետեւիլ
 ծնողքները , ու ամենեին աս դիտաւորու-
 թենէն դուրս չելան : Ծնողք մը պէտքը
 չէ որ իր տղէն ուրիշ բան խնդրէ , հապա ինչ
 որ արժան է . ու անկէ ետեւ երբոր կըտես-
 նայ թէ իր տղան յանցանք մը կընէ , պէտքը
 չէ որ անիկա առանց պատիժի անցունէ : Ա-
 նիրաւութիւն եղած կը լլայ երբոր մէկ տղայ
 մը սաստիկ կը պատժուի այսօր յանցանքի
 մը համար , ու հետեւեալ օրը նոյն յանցանքը
 կընէ , ու առանց պատիժի կըմնայ : Երբոր
 տղաքը կըտեսնան թէ՛ որչափ անհնազան-
 դութիւն ընեն միշտ հայրերնին իրենք կը-
 պատժէ , ան ժամանակը քիչ տղաքներ ան-
 հնազանդութեան մէջ կըյարատենն :
 Թող գիտնայ տղան որ իր ծնողքները իր-
 մէն միշտ հնազանդութիւն կըխնդրեն , ու
 թէ որ անհնազանդութիւն ընելու ըլլայ
 նէ , անշուշտ պիտի պատժուի . և անատենը

յատ զարմանալի պիտի ըլլայ, եթէ նոյն տղան բոլոր աս բաները գիտնալով երկար ժամանակ անհնազանդութեան մէջ մնայ:

Նոյն հաստատութիւնը ու միօրինակութիւնը պարտին ունենալ ծնողքները նաև իրենց տղոցը ուզածներուն վրայօք, ինչպէս են խաղալիկներ ու ասոնց նման բաներ: Անանկ բաներ կան՝ որոնց ամենեին ձեռք դպցունելու չեն տղաքը. ինչպէս, տղի մը ամենեին պէտքը չէ հայլիի հետ, կամ ջուրի ամանի հետ, կամ դանակի հետ, և կամ պատառաքաղի հետ խաղալ. պատճառը որ անոնցմէ ոմանք շուտով կրկոտրին, և ոմանք ալ տղին անձին վնաս կուտան: Այլ թէ մէկ ծնողք մը իր տանը մէջ միօրինակ կառավարութիւն ունենայ, տղան շուտով կը սորվի թէ որ բանը պէտք է ձեռք առնել, և որ բանը չառնել: Բան կայ որ պէտքը չէ այսօր տղին տալ, ու վաղը չի տալ, ուրիշ բաներ ալ կան՝ որ պէտք է մէկ տղայ մը երբեմն ձեռքը առնէ, և երբեմն չառնէ: Աղէկ է որ երբեմն ձայն հանող խաղալիկներ տրվին անոր, որ երթայ անոնց հետ խաղայ, ինչպէս՝ սրինգ, թմբուկ, և այլն, բայց երբոր տանը մէջ հիւր ըլլայ, պէտք է որ ան ձայնաւոր գործիքները ձգէ: Մէկ տղայ մը շուտով կը սորվի իր ձեռքի ունեցած բանը

առանց լալու տալ՝ երբոր իր հայրը կամ
 մայրը ուղէ իր ձեռքէն առնել , թէ որ նոյն
 տանը մէջ հաստատութիւն ու միօրինակ
 կառավարութիւն ըլլայ : Աթէ մէկ տղայ
 մը բան մը առնելու ըլլայ ձեռքը , որ պէտքը
 չէ առնել , աղէկ չէ անոր ձեռքէն մէկէն՝ ի
 մէկ յափշտակել ու առնել անիկա , երբոր
 իր անձին և կամ նոյն բանին վնաս մը չի
 պիտի ըլլայ ձեռքը առնելովը : Հապա միայն
 ըսելու է որ՝ ան ձեռքի բանը վար դնէ , կամ
 իրենց ձեռքը տայ : Թէ որ տղան կամակո-
 թութեամբ անոնց խօսքը մտիկ չընէ , ան-
 ստենք պէտք է պատժել անիկա , ու կրր-
 կին ըսել որ՝ ան ձեռքի բանը վար դնէ : Ընդ
 հանրապէս մէկ անգամ պատժելը բաւական
 է . բայց եթէ կրկին հրամանին մտիկ չընէ ,
 ան ժամանակը կրկին պատժելու է ան :
 Ըս ճամբովը առաւել աղէկ կը ըլլայ՝ որ
 տղան իր ձեռքի բանը ինք իր ձեռքովը վար
 դնէ , քան թէ քաշելով ձեռքէն առնել .
 ինչու որ գոնէ ան անգամին դուն անոր
 կամքը նուաճեցուցիր : Աւ ստանկ քանի մը
 դասեր բաւական են մէկ տղայ մը հնազանդ
 ու խոնարհ ընել : Այսու ամենայնիւ երբեմն
 կը պատահի որ՝ մէկ տղայ մը ատեն մը յա-
 մառեալ կը մնայ . և ստանկ դիպուածի մը
 մէջ՝ թէ որ իր ձեռքի ունեցած բանը համո-

զեւրով կամ յարմար պատիժով մը վար չի
 դնէ նէ, անատենը աղէկ է անոր ձեռքէն
 բռնութեամբ առնել, քան թէ չափէն է-
 վել անիկա պատժել: Ամենեին ապահով
 չէ որ մէկ տղի մը ըսվի թէ, մինչև իր ձեռքի
 ունեցած բանը վար չի դնէ նէ, պիտի պատ-
 ժըվի. աղէկ ճամբան ան է որ եթէ յօժա-
 րութեամբ վար չի դնէ անիկա, անատենը
 բռնութեամբ անոր ձեռքէն առնելու ու
 կրկին անիկա պատժելու է. ասանկով կա-
 րելի է թէ անկէ ետև աս տեսակ բաներ չի
 պիտի պատահին: Արբոր մէկ տղի մը կամ-
 քը իր ծնողացը կամքին դէմ է, անիկա
 ամենեին պէտքը չէ թող տալ իր կամքը
 կատարելու: Տայց կան անանկ ծնողքներ՝
 որ իրենց տղոցը կամքին կրղիջանին, անոնք
 խաղաղցունելու համար. օրինակի համար,
 ըսենք թէ տղան ձեռքը բան մը կառնէ որ
 ամենեին իրեն վերաբերեալ բան չէ, ու ծը-
 նողքը տղին ձեռքէն կառնեն անիկա. բայց
 երբոր կրտեսնան որ կուլակոր՝ կրկին ձեռ-
 քը կուտան: Ասիկա շատ անխորհուրդ
 բան է, ու ամենեին պէտքը չէ որ ծնողքնե-
 րը ասանկ ընեն: Արդարև մէկ կանոն մը
 պէտք է ըլլալ՝ որ երբոր տղայ մը բանի մը
 համար կուլայ, անատենը անիկա անոր տա-
 լու չէ, թէպէտ նոյն բանը տղին վերա-

բերեալ բան ըլլայ ալ նէ : Թող կանոնի տորվի տղան թէ մէկ բանի մը համար լայ նէ , անիկա չի կրնար առնել :

Նաև պէտք է գիտնալ՝ որ շատ գէշ բան է թող տալ տղայոց , որ մէկ բան մը ուզելու համար երկան բարակ ձանձրութիւն տան ծնողքներնուն : Արբոր մէկ տղայ մը բան մը կուզէ , ծնողքը պէտք է շուտով՝ ու իր խօսքին վրայ հաստատ մնալով՝ ըսէ , Մո՛կ , կամ , չէ : Բայց եթէ անանկ պատահի որ ծնողքը նոյն բոպէին մէջ չի կրնայ դատել թէ արդեօք տղին հարցումին ինչ պատասխան պէտք է տալ , անատենը պէտք է ըսել . Բիչ մը կեցիր , ու ետքը պատասխանը կուտամ քեզի . և ան հարցումին պատասխանն ալ պէտք է հաստատութեամբ ըլլալ : Ետ տկար ծնողքներ կան որոնց զաւկրները քիչ մը ժամանակ լալով ու թախանձ ընելով ինչ որ ուզեն կրնան առնել : Մէկ պզտի աղջիկ մը մօրը ըսաւ թէ , Մայր , սա նուռերէն մէկ հատ մը կուզեմ : Մայրն ալ ըսաւ . Չէ աղջիկս , ինչու որ այսօր դուն շատ պտուղ կերար , ու կը վախնամ որ հիւանդ պիտի ըլլաս : Չէ մայր իմ , ըսաւ աղջիկը , ես հիւանդ չեմ ըլլար , տո՛ւր ինձի մէկ հատ մը : Մայրը ըսաւ , Աղջիկս ինքըզինքըդ հիւանդ կրնես , ես կը-

խորհիմ որ աղէկ չէ մէկ նուռ մը առնես հի-
 մայ: Աս հիւանդը ըլլալէն չեմ վախնար մայր
 իմ, հարկաւ ես հիմայ մէկ հատ մը կուզեմ.
 ըսաւ աղջիկը: Մայրը ըսաւ, (Թէ որ ասանկ
 նեղութիւն տալէն դադրիս նէ, մէկ պա-
 հեկէն մէկ հատ մը կուտամ քեզի: Ան ը-
 սաւ աղջիկը, ես մէկ պահեկէն չեմ ուզեր,
 ես հիմայ կուզեմ, տուր ինծի մէկ հատ մը,
 ու ես աղէկ գիտեմ որ հիւանդ չեմ ըլլար.
 եկո՛, տուր ինծի հիմայ մէկ նուռ մը: Աղ-
 ջիկը քիչ մը ժամանակ ասանկ ընելով
 մայրը յոգնեցաւ, ու անոր ուզածը տալով
 բարկութեամբ մը ըսաւ: Ա՛ն սանուռը.
 աս որքան նեղութիւն է որ դուն ինծի տը-
 վիր, ես քեզի չի պիտի կրնամ խօսք հաս-
 կրցունել: Ա՛րդեօք որչափ առաւել աղէկ
 պիտի ըլլար, եթէ մայրը սկիզբէն հաստա-
 տուն խօսքով մը ըսեր թէ, 'Ան աղջիկս՝ հի-
 մայ չեմ իտար: Աւ թէ որ աղջիկը կրկին
 սկըսեր թախանձ ընել իր մօրը՝ ու ան բանը
 ուզել, անատենը մօրը պէտք էր ըսել.
 Ա՛ն կեցիր, դուն գիտես որ ամենեին բան
 մը չես կրնար առնել ինծմէ՝ նեղութիւն
 տալովդ, անոր համար պէտքը չէ որ ատ
 բանը կրկին ուզես: (Թէ որ աս խօսքերէն ե-
 տե աղջիկը ուրիշ խօսք մըն ալ ըներ ան
 բանին վրայօք, անատենը աղէկ պիտի ըլլար

անիկա պատժել . ինչպէս՝ մէկ կամ երկու
օր անոր պտուղ տալու չէր , կամ ասոր
նման բան մը պէտք էր ընել :

Դատ անգամ ծնողքները իրենց անհո-
գութեամբը սովորութիւն ընել կուտան
իրենց տղոցը իրենց նեղութիւն տալ : Տը-
ղան բան մը կուզէ , բայց ծնողքը կամ իր
անհոգութենէն , կամ իր միտքը ուրիշ տեղ
ըլլալուն , և կամ գործ ունենալուն տղին
ամենեւին չի նայիր , ու տղան շատ անգամ
կրկրկնէ , մինչև որ իմանայ , ու անոր պա-
տասխանը տայ : Աս սովորութիւնը շատ
վնաս կուտայ տղայոց , ուսկէց ծնողքները
յատկապէս պարտին զգուշանալ : Արբոր
տղաքը բան մը կը հարցունեն՝ կամ բան մը
կուզեն , ծնողքները՝ Ա՛յո՛ , կամ՝ չէ՛ , պար-
տին շուտով անոր պատասխանը տալ :

Արբորդ բանը՝ որ պիտի խօսիմ , տղայոց
հնազանդութեանը վրայ է :

Ինչպէս որ առաջ ըսվըցաւ՝ թէ ծնողք-
ները պարտին իրենց մէկ կանոն մը ընել ,
ու ամենեւին անկէ չի վատվիլ , թէ իրենց
զաւկրները միշտ իրենց հնազանդելու են :
Ո՛վ որ տղոց վրայ հոգաբարձութիւն ունի ,
իգտէ որ ամէն տղայ բնականաբար կուզէ իր
կամքին հետեւիլ , ու թէ որ աս բնաւորու-
թիւնը ինքիրեն ձգվելու ըլլայ , հետզհետէ

անանկ կրօնաբանայ , որ հնար չէ կրթու-
 թեան տակ բերել . բայց աս ինքնակամու-
 թիւնը պէտք է նուաճել . ու տղան միշտ
 պէտք է սորվի որ իր կամքը իր ծնողացը
 կամքին պիտի հնազանդի , և անոնք ինչ
 որ ըսեն անոնց խօսքը սիրով պիտի ընդու-
 նէ : Տղայ մը զսպելու համար , առաջին
 հարկաւոր բանը աս է որ ծնողքները պար-
 տին առաջ ինքրզինքնին զսպել : Ամենէն
 մեծ դժուարութիւնը ծնողաց մէջ՝ որ ինչո՞ւ
 համար իրենց տղաքը չեն կրնար զսպել ,
 աս է որ առաջ ինքրզինքնին չեն զսպեր :
 Եւ ատ դժուարին բան է որ մէկ ծնողք մը
 կարող ըլլայ իր իշխանութիւնը իր տղոցը
 վրայ հեղիկ ու խաղաղ կերպով սաստկա-
 ցընել . և մէկ ծնողք մը անշուշտ պարտի
 աս բանս ստացած ըլլալ իր ծնողական կրթ-
 թութեան կանոններուն համար , որ հար-
 կաւոր է : Աւրիշ խիստ հարկաւոր բան մըն
 ալ ծնողաց գիտնալու աս է որ իրենց
 տղոցը պզտիկուց պէտք է սկըսեն հնա-
 զանդութիւն սորվեցընել . շատերը կան որ
 կրխնդան ան մարդիկներուն վրայ , որ կըս-
 կըսեն իրենց տղաքը կրթել՝ երբոր անոնք
 տարու մը կը լլան . Անխնդացող մարդիկ-
 ները կըսեն թէ , Ա՞յ մէկ տարեկան տղան
 ի՞նչ գիտէ , և ի՞նչպէս կրնայ հասկընալ ,

երբոր ինքը չի կրնար խօսիլ : Սակայն աս
 տեսակը հարցումները իրենց տգիտութե-
 նէն յառաջ կուգայ : Ինչպէս որ մէկ տղայ
 մը մէկ տարեկանի չափ որ կը լայ՝ կըսկըսէ
 շարութիւն ընել, անանկ ալ կրնայ որ ա-
 ղէկ բաներ ընէ. ու քանի որ ինքը աս տարի-
 քին մէջն'է և կուզէ իր կամքը ընել, անանկ
 ալ նոյն ժամանակը ան կամքը հնար է զըս-
 պրմիլ : Օ՛նողքները քաղցրութեամբ պար-
 տին կրթել իրենց տղաքը, և մանաւանդ ա-
 նոնք՝ որ շատ փոքր են, բայց պէտքը չէ որ
 իրենց տղաքը մեղքընան՝ ըսելով թէ անոնք
 փոքր են, ու չեն կրնար տակաւին կրթը-
 վիլ . հապա պէտք է որ սկըսեն պզտիկուց
 կրթել անոնք : Ինքնակամութիւնը՝ որ տը-
 ղաքը ծնելէն ետև կըսկսեն ցուցընել, որ ըստ
 օրէ շատ գէշ կը լայ եթէ անոր վրայ հոգ
 չի տարմի . աս ինքնակամութիւնը աւրե-
 լու համար՝ առաւել յարմար ժամանակը
 անատենն է, երբոր անոնք շատ պզտիկ են :
 Եսիկա շատ աղւոր մէկ օրինակ մըն է, որ
 ուրիշ բաներու հետ բաղդատելով, շատ
 աղւոր օգուտներ կրնանք քաղել ասկէց :
 Երբոր մենք կը հիւստնանք, գիտենք որ ե-
 թէ սկիզբէն քիչ մը գեղ ուտելու ըլլանք
 նէ, առաւել աղէկ կը լայ . բայց եթէ նոյն
 հիւանդութիւնը քիչ մը ժամանակ թող

տանք նէ , կարելի է անանկ զօրանայ՝ որ
անատենը որչափ դեղ ընենք նէ , բոլորո-
վին ոչինչ ըլլայ : Աթէ մէկ քաղքի մը
մէջ տուն մը բրարնկելու ըլլայ , ամէն
մարդ կրջանայ անիկա նոյն բրարնկած ժա-
մանակը մարել , ինչու որ ամէն մարդ պի-
տէ որ և թէ անիկա քիչ մը ժամանակ թող
տայու ըլլան նէ կրսաստիանայ , ու անկէ
ետեւ մէկ մարդ մըն ալ անոր դէմ չի կրը-
նար դալ : Ահա աս օրինակներուն նայե-
լով ծնողքները պէտք է որ իրենց տղաքը
սկըսեն պզտիկուց կրթել՝ անոնց կամքը
նըւաճելու համար : Աս գործը երբոր տղան
պզտիկ է շատ դիւրին կըլլայ . բայց երբոր
կըսկըսէ տարւէ տարի մեծնալ , անատենը
շատ դժուար կըլլայ , ու թէ որ քիչ մը ժա-
մանակ թողվելու ըլլայ , ու ամենեւին հոգ
չի տարվի , անկէ ետեւ որչափ աշխատվի ա-
նոր վրայ , բոլոր ան եղած ջանքերը ոչինչ
կըլլայ :

Ստոյգ չեմ կրնար հաստատել թէ ար-
դեօք մէկ ծնողք մը ե՞րբ կամ որչափ մեծ-
նայ նէ իր տղան պիտի սկըսէ անիկա պատ-
ժել , ու չի կրնար ալ հաստատվիլ . ինչու
որ տղայոց բնաւորութեան ու պարագա-
ներուն մէջը զանազան տարբերութիւններ
կան : Բայց ընդհանրապէս մէկ կանոն մը

կրնայ դրվիլ , որ երբոր մէկ տղայ մը տարու մը կըլլայ , բաւական մեծցած է հնազանդութիւն սորվելու , ու շատ տղաք կան որ մէկ տարեկան ըլլալէն առաջ ալ կրնան հնազանդութիւն սորվիլ :

Եթէ մէկ մարդ մը կըտարակուսի թէ արդեօք հնար է որ մէկ տարեկան տղայ մը բան սորվի , թող ինքը փորձը ընէ ու նայի թէ կըլլայ արդեօք եթէ չըլլար : Բայց նոյն մարդը պէտք է իր խօսքին ու հրամանին վրայ միօրինակ ու հաստատուն ըլլայ : Կարելի է թէ մէկ տղայ մը ամէն բանէն առաջ կրնայ սորվիլ մէկ բանի մը չի դրայչիլ , երբոր ինքը կուզէ դպչիլ անոր : Ընկերայ այս տեղ մէկ կանոն մը պիտի դրվի , որ շատ աղէկ պիտի ըլլայ , թէ որ ամէն մարդ անոր հետեւի : Երբոր մէկ տղայ մը մէկ բան մը ձեռքը կառնէ , որ պէտքը չէ առնել , անատենը ծնողքը պէտք է անոր ըսէ . Ինձի նայէ , ու իր գլուխը երեւցընելով , կամ ուրիշ տեսակ տհաճութեան նշան մը ընելով , ըսէ թէ մի՛ ըներ ատ բանը . ու թէ որ տղան մտիկ չընէ և կրկին ընէ , սն ժամանակը պէտք է անիկա ան բանէն քիչ մը հեռացընել , ու կրկին նոյն տհաճութեան նշանը ընելով ըսել ինչ որ առաջ զրուցեց : Եթէ կրկին ուզէ ան բանին մօտենալ ,

պէտքը չէ անիկա բռնութեամբ ասդին
 քաշել ու թող չի տալ, հապա թողելու է որ
 իր կամքին ուզածին պէս ազատաբար եր-
 թայ, ու անկէ ետեւ ծնողքը պէտք է ձեռքին
 կամացուկ մը զարնէ. անանկ որ տղան ցաւը
 իմանայ, թէպէտ ոչ շատ. և անատենը
 կրկին պէտք է նոյն խօսքը զրուցել, ինչպէս
 որ առաջ զրուցվեցաւ: Աս զարնելը տղին
 պատճառ կը լայ լայու, ու թէ որ բարկա-
 նայ ու ջանայ ան բանը բռնութեամբ առ-
 նել, ան ժամանակը ծնողքը պէտք է որ
 շատ ծանրութեամբ կրկին նոյն պատիժը
 ընէ, ու կարելի է թէ ամէն տղայ ասանկ չի
 պիտի ընէ. ինչու որ շատ տղաքներ որ մէկ
 տարեկանի չափ են, ու երբոր առաջին ան-
 գամը պատիժ կրելու ըլլան, շատ կը զար-
 մանան ու կը վշտանան, և կը կրօնեն երկան
 բարակ լայ: Բայց ծնողքները առանց ա-
 նոնց մտիկ ընելու թող տալու են որ երթան
 լան. ինչու որ պատիժ ընելէն ամենեւին
 վեաս չի գար, ու կարելի է թէ աս թեթեւ
 պատիժները բոլոր տղոցը կամքը պզտիկուց
 պիտի կօտրեն եթէ անոնք աղէկ նայվելու
 ըլլան, և բոլոր իրենց ծնողացը ունեցած
 ջանքերնին իրենց զուկրները հնազանդ
 ընելու համար ետքը շատ դիւրին պիտի ըլ-
 լան: Արբոր տղան իր լացը կրկարէ, ծնող-

քը պէտք է քաղցրիկ ու հանդարտ կերպով
 մը անոր մօտենայ, ու անիկա իր գիրկը առ-
 նելով իր հաճութեամբը մէյմը անիկա
 պագնէ՝ երբոր տղան առանց լալու ու ազա-
 տաբար իր ծնողքին կերթայ: Նայց ըսենք
 թէ երբոր տղան կըտեսնայ որ իրեն կըմօ-
 տենանկոր ու կսկըսէ լալ, ինչպէս որ հա-
 սարակարար սսանկ կընեն տղաք, անա-
 տենը պէտք է ամենեին անոր չի դպչովի.
 ու անանկ թող տալու է որ ինքիրենը եր-
 թայ մնայ. ինչու որ տակաւին անոր կիրքը
 իջած չէ: Մտողքն ալ պէտք է իր գործին
 հետևի, ու մէկ վիշտ մը չիմանայ անիկա
 անանկ թողելուն համար: Վանի որ մէկ
 տղայ մը կուլայ, ամենեին պէտքը չէ անիկա
 պագնել, կամ անոր անուշ բաներ տալ,
 կամ թէ ուրիշ աս տեսակ բաներ ընել:
 Խիստ կարելի է որ մէկ տղայ մը առաջին
 անգամը նոր պատիժ կրելու ըլլայ նէ կըս-
 կըսէ լալ, ու անկէ ետև կուզէ որ քնանայ.
 զէն չունի թող քնանայ, ինչու որ երբոր
 քունէն արթըննալու ըլլայ, կրկին ան պա-
 տիժը միտքը պիտի բերէ: Ալ թէ անոր ծը-
 նողքներն ալ կանոնաւոր կրթութեան ըն-
 թացքը կառարելու ըլլան, տղին կամքը բո-
 լորովին կըզսպովի. և անկէ ետև տղան ալ
 ուրիշ կամքէ մը չի պիտի հետևի, բայց միայն

իր ծնողացը կամքին . այսինքն ըսել է որ՝
 տղան կատարեալ հնազանդութիւն պիտի
 սորվի : Ղշմարիտ հնազանդութիւնը կը-
 ցուցնէ կատարեալ հպատակութիւն մը
 ունենալ ծնողաց կամքին . և մէկ ծնողը մը
 պէտքը չէ որ իր տղէն ասկէ ուրիշ աւելի
 բան մը խնդրէ : Ամենէին տղի մը թող
 տալու չէ որ իր ծնողացը հրամաններուն
 պատճառը հարցընէ հնազանդելէն առաջ .
 ինչու որ տղան առ հարցումը ընելով ըսել
 կուզէ թէ ինքը արդարութեամբ անոր
 պատճառը կրնայ քննել իր ծնողացը հետ .
 ու կրնայ ալ դատել թէ պոզեօք անոնց
 հրամանին հնազանդիլ պէ՞տք է մի , և թէ
 չէ : Եւ առ դէշ բան է որ մէկ տղայ մը իր
 մօրը հրամաններուն դէմ բան կըզրուցէ .
 ինչպէս , մայր մը իր տղին կրսէ թէ , Այս
 ինչ բանը մի ըներ . տղան կըհարցընէ ու
 կրսէ թէ , Ինչո՞ւ պիտի չընեմ , կամ ինչո՞ւ
 պիտի չառնեմ . կամ թէ ինչո՞ւ հոս պիտի
 նստիմ : Աս տեսակ հարցումները ժամա-
 նակին պէտք է ըլլալ , բայց անատենը տղին
 գլխաւոր պարտքը հնազանդելէն ՚ի զատ
 ուրիշ բան ըլլալու չէ : Ասորհամար տղաք-
 ները թող տալու չէ որ իրենց ծնողացը
 հրամաններուն պատճառը անոնց հարցու-
 նեն : Երբոր յարմար ժամանակ ըլլայ ,

աղէկ է որ ծնողքները իրենց տղոցը իրենց
 հրամաններուն պատճառը զըուցեն, բայց
 ասիկա պէտքը չէ որ ըսվի՝ քանի որ տղան չէ
 հնազանդեր ու կուզէ անոր պատճառը
 իմանալ: Մէկ մայր մը իր տղին ըսաւ,
 Յոհաննէս, գնա պառկէ հիմայ. Ինչո՞ւ,
 ըսաւ Յոհաննէս, ինչու համար հիմայ պիտի
 երթամ պառկիմ, տակաւին շատ կանուխ է:
 Մայրը հաստատութեամբ կրկին ըսաւ.
 Տղաս, ես քեզի ըսի որ գնա պառկէ. հիմայ
 այսքանը բաւական է քեզի գիտնալ. անոր
 համար ուրիշ հարցումներ մի՛ ըներ, հապա
 միայն հնազանդէ: Մէկ ուրիշ մայր մը
 Յոհաննէսին հարցումին՝ որ ըսաւ թէ,
 Ինչո՞ւ հիմայ պիտի երթամ պառկիմ, կա
 րելի է պատասխան պիտի տար թէ՛ Մնոր
 համար հիմայ գնա պառկէ կրտսմ, որ վաղը
 առտու կանուխ պիտի ելլես. ու թէ որ իրիկ
 վընէ կանուխ չի պառկիսնէ, առտրվանց ալ
 կանուխ չես կրնար ելլել: Հիմայ Յո
 հաննէսը կրտէ. Չէ մայր իմ, տակաւին կէս
 ժամի չափ ալ նստիմ, ու անկէետե կեր
 թամ կրպառկիմ: Մայրը կրտէ. Չէ, կը
 վախնամ որ եթէ քիչ մըն ալ աւելի նստելու
 ըլլաս, առտրվանց քնհատ պիտի ըլլաս:
 Չէ մայր իմ, կրտէ Յոհաննէս. ես գիտեմ
 որ քնհատ չեմ ըլլար, թող տուր որ կէս

ժամ ալ աւելի նստիմ, աս կերպովս իրա-
րու հետ կըխօսակցին. ու կարելի է տղան
իր կամքը ինչպէս ուզէ այնպէս կրնէ, ուզէ
կերթայ, ուզէ չերթար: Ասանկով տղան
մէկ գէշ սովորութիւն մը կըստանայ, և հը-
նազանդութեան մէջ ալ շատ ետ կըմնայ:

Օնողքները պէտք է զգուշ ըլլան որ
իրենց զակերներուն համար դրած կանոն,
ներնին չի շատցունեն, և ամենեին մէկ
հրաման մը ընելու չեն երբոր միտք չունին
նոյն հրամանին տղան հնազանդեցընել:
Դատ առաւել աղէկ կըլլայ չի պատուի-
իրելը, քան թէ պատուիրելը, երբոր տղան
նոյն պատուէրին չի հնազանդիր: Օնողք
մը պէտք է իր պատուէրը իր տղին վրայ
ազգու ընէ, և իր տղան պէտք է հնազան-
դեցընէ. եթէ մեծ բանի մէջ, և եթէ պրզ-
տիկ, աս հարկաւոր գործին համար շատ
արթնութիւն և հոգ, ու շատ համբերու-
թիւն պէտք է: Անհոգ ծնողք մը ամենեին
չի կրնար իր տղոցը ներսի դին հնազան-
դութեան ունակութիւնը տպաւորել: Մէկ
անգամ մը Պօղոս ապակիի մը մէջ դրված
չինծու ծաղիկին հետը կըխաղարկոր. մայ-
րը ըսաւ, Պօղոս՝ մի խաղար ատոր հետ:
Տղան քիչ մը ետ կայնեցաւ ու երբոր տե-
սաւ թէ մայրը ուրիշ գործերու պարապե-

ցաւ, կրկին սկըսեց անոր հետ խաղալ: Մայ-
 րը ըսաւ, Պօղոս՝ չի լսեցիր որ ըսի թէ ան-
 նոր հետ մի խաղար. ինչո՞ւ ինծի չես հնա-
 զանդիր: Տղան քիչ մը ժամանակ ասդին ե-
 կաւ. ու երբ նայեցաւ թէ մայրը կրկին իր
 գործին հետեւեցաւ, սկըսեց նորէն խառնել
 անիկա: Մայրը ըսաւ, Պօղոս՝ դուն շատ գէշ
 տղայ մըն ես. ինչո՞ւ իմ խօսքս մտիկ չես ը-
 ներ. թէ որ ան ծաղիկին անգամ մըն ալ գըրպ-
 չելու ըլլաս, հօրդ պիտի ըսեմ որ քեզ ծեծէ:
 Պօղոս աս խօսքին վրայ քիչ մը վախցաւ ան
 միջոցին. բայց քիչ մը ժամանակէն ետե-
 կամաց կամաց սողալով կրկին ծաղիկին
 քովը գնաց, ու վերջապէս ձղեց վար՝ ու
 կոտրեց ապակին: Հիմայ մայրը բարկանա-
 լով իր անհնազանդ տղին ետեւէն գնաց, ու
 սկըսեց երեսին ու կռնակին զարնել, ըսելով
 թէ, Ահա աս պատիժը ընելովս քեզի պիտի
 սորվեցընեմ որ հեղմալ բան մը ըսեմ նէ
 ինծի հնազանդիս: Հիմայ տղին կերած ծե-
 ծը իր անհնազանդութեանը համար չէր,
 հապա ապակին կոտրելուն համար: Ապա-
 կին կոտրեցաւ, անոր համար տղան ծեծ կե-
 րաւ: Այլ թէ աս բանը պատահելու չըլլար,
 տղան ազատ պիտի մնար բոլոր իր մօրը դէմ
 բրած անհնազանդութիւններովը, և ամե-
 նեին պատիժ չի պիտի կրեր: Բայց ճշմո-

րիտը՝ աս պատիժին արժանաւոր էր անիկա
 ապակին կոտրելէն առաջ, ինչպէս նաև ան-
 կէց ետքը : Արդարև մէկ ծնողք մը երբոր
 հրաման մը կընէ իր տղին, ու ան մտիկ չը-
 ներ, առջի անգամին պէտք է շատ հոգ տար-
 վի ու պատժըվի . ինչու որ տղան աս ճամ-
 բովս պիտի սորվի՞ որ իր ծնողացը խօսքերը
 մէկ արժէք մը կամ զօրու թիւն մը ունին, և
 ասանկ սովորութիւն պիտի ըլլայ տղին որ
 միշտ անոնց խօսքին հետևի : Արբոր մէկ տը-
 ղայ մը կը պատժըվի, ծնողքները պարտին
 գիտնալ որ չէ թէ միայն անոնց անհնազան-
 դութեանը համար պիտի պատժեն անոնք,
 հապա հնազանդութիւնը անոնց սրտին մէ-
 ջը մէկ սովորութիւն մը ընել տալու համար,
 որ իրենցմէ մեծին, իրենց ծնողացը, կամ
 վարժապետներնուն, և կամ վարպետ-
 ներնուն հնազանդ ըլլան : Աս խորհուրդը
 կը ցուցընէ թէ որչափ հարկաւոր բան է տը-
 ղայոց՝ որ իրենց ծնողացը հնազանդութիւն
 ունենալու ունակութիւնը ստացած ըլլան :
 Թէ որ տղաք իրենց ծնողացը չեն հնազան-
 դիր, իրենց վարժապետներնուն ալ չի պի-
 տի հնազանդին : Թէ որ անոնք իրենց ծնո-
 ղացը չեն հնազանդիր, Աստուծոյ ալ չի պի-
 տի հնազանդին : Ուրեմն ծնողաց անհնա-
 զանդ ըլլալու սովորութիւնը՝ ուրիշ ամէն

տեսակ մեղքերու ալ կառաջնորդէ կրտանի տղաքը . ու թող ամէն ծնողք գիտնայ , որ ինքը իր տղոցը մեղքերուն հետ հաղորդ կը լլայ , երբոր անոնք պզտիկուց չի կրթեր :

Չորրորդ բանը՝ որ պիտի զրուցեմ , հատուցման ու պատժոց վրայ է :

Պատիժին վրայօք մինչև հիմայ շատ անգամ զրուցվեցաւ , որ անիկա մասնաւորաբար տղաքը աղէկ կրթելու համար կը գործածվի , ինչպէս որ յայտնի է . ու նաև ամէն ծնողք պարտին գիտնալ որ իրենց երեւելի պարտքերնին է իրենց տղաքը աղէկ ու զգուշութեամբ կրթել : Մտղքները պարտին գիտնալ որ չէ թէ իրենց ուղածին պէս իրենց զաւկրները պատժելը կամ չի պատժելը ձեռքերնին է , հապա որ անիկա անոնց մէկ պարտք մըն է տրված , որ երբոր զաւկրներնին յանցանք մը կրնեն , պատժելու են անոնք : Աս պարտքը յայտնի ցուցված է Աստուծոյ խօսքերուն մէջը , ինչպէս որ հիմայ հետևեալ վկայութիւններէն պիտի իմանանք :

Խրատէ քու որդիդ , որ ան քեզի հանգրստութիւն տայ : Աւար . իթ . 17 :

Ան որ գաւազանը կրինայէ իր որդին կատէ , ու ան որ կըսիրէ առաջուց կըխրատէ : Աւար . ժգ . 24 :

Տղան խրատելու մի խնայեր, ինչու որ
եթէ անիկա գաւազանով ծեծես, չի պիտի
մեռնի. անիկա գաւազանով ծեծելովդ՝ ա-
նոր հոգին դժոխքէն պիտի փրկես: Առաջ .
իդ . 13, 14:

Ամտութիւնը տղին սրտին մէջը կապ-
ված է, բայց գաւազանը և խրատը անիկա
անկէց պիտի հեռացրնէ: Առաջ . իբ . 15:

Խրատէ քու որդիդ՝ որ քեզի մէկ բարի
յոյս մը ըլլայ, ու քու հոգիդ թող չի խնայէ
անոր լալուն նայելով: Առաջ . ժթ . 18:

Աս վկայութիւններէն յայտնի է որ ծը-
նողքներուն պարտքն է եղեր իրենց տղաքը
պատժելը: Հիմայ աս հարցումը կելէ, [Ե
արդեօք պատիժը ի նչպէս պէտք է ըլլալ:
Անշուշտ որչափ որ հնար էնէ շատ քաղցրիկ
կերպով մը, և աս կերպովս աւելի կարող
պիտի ըլլանք մեր ուզած վախճանը ձեռք
բերել. որ է տղին հնազանդութիւնը: Հի-
մայ պէտք է յիշել Պօղոս առաքեալին Աո-
ղոսացիներուն դրած յորդորանքը. “այ-
րեր՝ ձեր որդոցը սիրտը մի կըսկըծցունէք,
որ սրտերնին չի կօտրի”: Առաջ . 21:

Եթէ մէկ ծնողք մը անողորմ ու բարկա-
ցող ըլլալու ըլլայ, թէպէտ իր տղաքը իրմէն
պիտի վախնան, բայց չի պիտի սիրեն ու
պատուեն անիկա: Հիմայ անգամ մըն ալ

կրսեման խօսքը որ առաջ զըուցվեցաւ, թէ ծնողքները ամենեին պէտքը չէ որ իրենց տղաքը պատժեն, երբոր իրենք բարկութեան մէջ են: Մտողքներէն ոմանք իրենց տղաքնին ուրիշ ժամանակ չեն ծեծեր, հապա միայն երբոր կը բարկանան. ու նոյն բարկացած ժամանակնին կուզեն ծեծել, երբոր ուրիշ ժամանակ ամենեին միտք չունին անոնք ծեծելու: Արբոր մէկ ծնողք մը կը բարկանայ, անատենը ամենեին պէտքը չէ որ իր զաւակը պատժէ. հապա պէտք է սպասել, մինչև որ միտքը կրկին հանդարտի:

Մտողքներէն ոմանք, երբոր մէկ տղայ մը յանցանք մը կընէ, կըսկըսեն բարկութեամբ տղին երեսին, գլխուն, կամ թևերուն՝ զարնել, ու ամենեին հոգ չեն ըներ թէ արդեօք տղին ուր տեղին կը զարնենկոր: Ասիկա շատ անիրաւ բան է, ու անկէ ՚ի զատ տղին անգամները անշուշտ կը վնասին: Ասե տղան իր հօրը անկիրթ բնութիւնը տեսնալով, իր մտքին մէջը մէկ գէշ տպաւորութիւն մը կը լլայ. և անկէ ՚ի զատ կարելի է թէ անանկ մէկ ախտ մը կը ստանայ, որ մինչև իր կեանքին վերջը այնպէս կը քաշէ: Մտողքները պարտին իրենց մէկ կանոն մը ընել, որ տղի մը գլխուն, կամ կուրծքին, կամ ստամոքսին, և կամ ոսկոր եղած տեղ-

վանքներուն մօտ ամենեւին չի զարնեն , որ
 կարելի է թէ կրկնորի : Արբոր մէկ տղի մը
 կը հարկաւորի մարմնաւոր պատիժ ընել , ա-
 ղէկ է որ մէկ պզտի գաւազանով մը ըլլայ ,
 քան թէ ձեռքով . և անանկ զարնելու է որ
 տղան մէկ ցաւ մը իմանայ , բայց չէ թէ ան-
 դթութեամբ : Այլ թէ տղայ մը պզտիկուց ա-
 ղէկ կը թրվելու ըլլայ , մեծնալու ըլլայնէ
 հազիւ թէ ծեծ կամ պատիժ հարկաւոր կը ը-
 լայ անոր : Սէկ տղի մը առաւել յարմար
 ժամանակը պատիժ կրելու անատենն է ,
 երբոր դեռ պզտիկ է ու չի կրնար խօսիլ , հա-
 պանոր կը սկսէ բառերը հասկրնալ . ահա
 ան է պատիժին յարմար ժամանակը , ինչու
 որ տղան ամէն բանէն առաւել աղէկ միտ-
 քը կը պահէ ինչ բանի համար պատիժ կրե-
 լու . ու հազիւ թէ մէյմալ ան բանը պիտի ը-
 նէ : Արբեմն կը պատահի որ մէկ տղայ մը
 բաւական մեծցած է ու պատիժի արժան
 բան մը կրնէ . բայց եթէ պզտիկուց աղէկ
 կը թրվելու ըլլարնէ կարելի է թէ ան յան-
 ցանքը չի պիտի ընէր : Արբոր մէկ տղայ մը
 բաւական կը հասկրնայ , ու ինչ որ անոր
 կըսվինէ չընէր , անատենը անիկա ծեծելու
 է , ու ան ալ պէտք է ըլլայ շատ համեստու-
 թեամբ ու իր յանցանքը իր մտքին մէջը տը-
 պաւորելով : Հայրը թող տղան մէկ առան-

ձին սենեակ մը տանի, ու անոր հետը աս հե-
 տեալ կերպովը թող սկսէ խօսիլ : Տը՛ղաս,
 դիտե՛ս որ դուն ինձի անհնազանդութիւն
 ըրիր, ու դուն մեղք գործեցիր՝ չէ թէ միայն
 ինձի դէմ, հապա Մտուծոյալ դէմ. ինչու
 որ Մտուած ըսաւ, Տը՛ղաք ձեր ծնողացը
 հնազանդեղիք : Աւ հիմայ իմ պարտքս է որ
 քեզ պատժեմ, ու կարծեմ որ դուն շատ
 պիտի տրտմիս քու ըրած մեղքիդ համար. և
 կըյուսամ որ հիմայ պիտի երթաս ու Մտ-
 տուծմէ ներուժ խնդրես՝ որ քեզ հեռի պա-
 հէ կրկին աս տեսակը մեղքեր գործելէն :
 Հայրը թող հիմայ իր տղին հետ աղօթքը
 նէ, Մտուծմէ խնդրելով թէ անոր ըրած
 մեղքը իրեն իմացընէ, և իր շնորհքովը ա-
 նիկա պահպանէ անկէ ետե նոյն մեղքերը
 գործելէն, ու ետքը թող տղան պատժուի,
 բայց առանց բարկութեան կիրք մը ցուցը-
 նելու : Թէ որ մէկ մարդ մը աս կերպովը ան-
 գամ մը պատիժ ընելու ըլլայ, տղին շատ օ-
 գուտ կընէ, ու առուել տղան կըհնազան-
 դեցընէ, ու նաև հնազանդութիւնը տղին
 սրտին մէջը իբրև մէկ սովորութիւն մը ե-
 դած կըլլայ. բայց թէ որ բարկութեամբ ու
 հիմակվան սովորական կերպովը հարիւր
 պատիժ ըլլովի բոլորը ոչինչ է : Արդարև
 տղոցը յանցանքներուն նայելով իրենց

պատիժները կրտարբերին , բայց վերի դը-
րած կանոննիս մէկ ընդհանուր ու օգտակար
օրինակ մըն է : Արդեօք մէկ մայր մը կըսէ՞
Թէ ինքը ժամանակ չունի իր տղին հետ աս
կերպով խօսակցիլ , որ անոր յանցանքները
իրեն ճանչցընէ : Այլ թէ մէկը աս խօսքը ըսե-
լու ըլլար , ան ժամանակը անոր կըպատաս-
խանէի թէ , ժամանակ չի կորսնցունելուն
կերպը աս է : Շատ մայրեր չեն գիտեր թէ
արդեօք ամէն օր յորչափ ժամանակ կըկոր-
սընցունեն իրենց անկիրթ ու անկանոն տը-
ղոցնուն հետ : Այլ թէ մայրերը իրենց տղաքը
պզտիկուց կանոնաւոր կըթելու ըլլան , ան-
կէ ետեւ շատ ժամանակ կըվաստրկին , և ի-
րենք ալ հանգիստ կըլլան : Հազիւ թէ մէկ
ուրիշ բան մը ծնողք մը առաւել երջանիկ
կընայ ընել , որչափ որ իրենց տղոցը կանո-
նաւոր կըթուծին :

Աւրիշ շատ տեսակ պատիժ ընելու եղա-
նակներ ալ կան դաւազանէն 'ի զատ , որ
ընդհանրապէս էվելօք ընտրելի են : Ինչպէս
մէկ մեծ պատիժ մըն է տղոցը՝ որ մէկ խաղա-
լիկ մը կամ անուշեղէն ուտելիք բան մը ի-
րենց առջին դրված ըլլայ , ու անոնք անոնց
չի մօտին : Արբեմն աս տեսակ բաներ ընե-
լը շատ օգտակար է տղոց , որ շուտով կը-
սորվին իրենց ծնողացը հնազանդ ըլլալ :

Արբոր մէկ տղայ մը յանցանք մը կրնէ, ա-
 նիկա սեղանը նստած ժամանակը արգիլե-
 լու է անտեղի գտնուված պտուղներէն կամ
 անուշեղէն բաներէն չուտել . կամ թէ թող
 տալու չէ որ սեղանը գայ ու միւսներուն հետ
 ուտէ, հապա առանձին ինքիրենը երթայ
 ուտէ, ու գրեթէ աս սեղանէն զրկուվելուն
 պատճառաւը ան քրած յանցանքը կրկին չի
 պիտի ընէ: Արբեմն բաւական պատիժ մըն
 է մէկ տղայ մը աթոռի մը վրայ նստեցընել,
 կամ թէ գետնին վրայ մէկ ժամի չափ կանգ-
 նեցընել, կամ թէ անիկա թող չի տալ որ
 իր սովորական ժամին երթայ խաղալու,
 կամ երբեմն անիկա տանը մէջ պահելու է
 երբոր բոլոր միւսները դուրս կերթան խա-
 ղալու: Սնողքները ուրիշ աստնց նման շատ
 տեսակ պատիժներ պարտին խորհիլ . բայց
 երբոր մէկ տղայ մը մէկ յանցանքի մը հա-
 մար կը պատժուի, պէտք է ուրիշ ժամա-
 նակ նոյն յանցանքին համար կրկին պատ-
 ժուի . ու չըլլայ որ մէկ անգամին ծնողք-
 ներնին անոնք պատժեն ու միւս անգամին
 զանց ընեն . ոչ ալ անոնց լացին ու աղա-
 ջանքներուն նայելով անոնք առանց պա-
 տիժի անցընեն: Այն այնպէս ծնողքներ ալ,
 որ կրկարծեն թէ իրենց տղոցը հնազան-
 դութիւն կը սորվեցընեն ուրիշ եղանակներ

գործածելով, որ շատ վնասակար է: Օր-
նողքներէն ոմանք իրենց տղաքը հնազան-
դեցընելու համար՝ կրվախցընեն անոնք,
աներևոյթ ոգիներու, կամ ուրիշ աս տե-
սակը բռնելու վրայօք պատմութիւններ
ըսելով անոնց: Ինչպէս՝ կըսեն թէ, Հի-
մայ մէկը պիտի գայ՝ որ քեզ պիտի տանի:
Տղաքը աս խօսքը լսելովնին մինչև անգամ
դռանը բով երթալ կրվախնան: Կամ թէ
ուրիշ մէկը դուրս կըխրկեն որ դռանը զար-
նելով, կամ ուրիշ ասանկ ձայներ հա-
նելով, իրենց տղաքը հնազանդեցընեն՝
միայն վախցընելով անոնք: Խեղճ տղաքը
վախնալնուն ինչ որ ըսեն իսկոյն կըհնա-
զանդին, ու շուտով կընեն, որ ան սոսկալի
ոգիները չի տեսնան: Բայց աս տեսակ
ճամբայ բռնելը բոլորովին վնասակար է
տղոցը մտքերուն, ու աս կերպով եղած
հնազանդութիւնը տղի մը ամենեւին օգուտ
չըներ, ու նաև տղին ներսի դիէն ալ շուտով
կելէ: Աս տեսակ պատմութիւններ ընելը
անգամ շատ վնաս ունի տղոց, ուրկէց ամէն
մարդ պետք է զգուշանալ: Օրաններուն
վրայ ալ արթուն ըլլալու է. ինչու որ անոնք
միշտ պատրաստ են տղոցը միտքը վախնալու
պատմութիւններով լեցընել, որոնց տպա-
ւորութիւնները ոմանց վրայ մինչև անգամ

կատարեալ մարդ ըլլան նէ մէկ ախտի մը պէս կըմնայ : Արբեմն ծնողքնէրը իրենց տղոցը սուտ վախեր տալով կըջանան որ անոնք իրենց հնազանդեցընեն , ինչպէս՝ կըսեն որ եթէ անոնք իրենց խօսքը մտիկ չընեն նէ , Չինկեանէնէրուն պիտի տան որ տանին . որ արդարեւ ամենեւին ասանկ բան ընելու միտք չունին : Ասիկա տղին սուտ մը ըսել է , որ ասանկ մէկ քանի մը անգամ ըսելով՝ տղին ներսիդիին շատ ազգու կըլլայ , ու անկէ ետեւ շատ դժուար կըլլայ անիկա գէշ բաներէն ետ դարձունելը : Անկէ ետեւ տղան շուտով կըսորվի որ իր ծնողքը ամենեւին աստե՛սակ բաներ ընելու միտք չունին , ու կըսկըսէ իր ծնողացը խօսքերը ատել , ու նաև մէկ նոր համար մը առած կըլլայ սուտ խօսքեր խօսելու : Ծնողքները պէտքը չէ որ մէկ բան մը ըսեն , երբոր չեն կրնար ընել , կամ թէ երբոր ամենեւին միտք չունին ան բօնը ընելու : Տղայ մը պատիժի համար մոլթ սենեակի մը մէջ դնել , կամ ասոր նման բաներ ընել , որով որ տղան կըվախնայ , շատ վնասակար բան է , ու ամենեւին աստե՛սակ բաներ պէտքը չէ ընել : Տղաքները պէտքը չէ որ պատժըվին միայն ապակի կամ ուրիշ տեսակ բան մը պատահամբ կոտրելով , հապա պէտք է որ անոնք մար-

դասիրութեամբ խրատվին , որ աս տեսակ
բաներուն վրայօք զգուշութիւն ունենան :
Բայց երբոր անհնազանդութեամբ կրնեն ,
ան ժամանակը հարկաւ պարտին պատժը-
վիլ , ու նաև գիտնալ որ ան պատիժը չէ թէ
նոյն պատահմունքին համար կը լլայ , հապա
իրենց անհնազանդութեանը համար :

Մէկ տղայ ինչ կերպով որ ըլլայ պատ-
ժըվելէն ետև , պէտք է կրկին իր ծնողացը
քով ըլլայ , որչափ շուտով հոր նար էնէ :
Արբոր տղայ մը պատժըվելէն ետև կերևայ
որ հնազանդեր է , ու իր յանցանքները աղէկ
գիտէ , ան ժամանակը պէտք է իր ծնողքը
համբուրելով մը անիկա ընդունէ : Արբոր
տղայ մը կը պատժըվի ու անկէ ետև իր ծը-
նողացը քով կուգայ , ան ժամանակը պէտքը
չէ որ ամենեւին անոր քրած յանցանքին հա-
մար կրկին բան զրուցվի , որուն համար որ
ինքը պատժըվեցաւ : Աւ ծնողքները ընդ-
հանրապէս պարտին զգուշանալ որ ամենե-
ին տղան ուրիշներուն առջևը չի նախատեն
իր յանցանքին համար : Մպարէն ծնողքնե-
րը պէտք է իրենց մէկ ընդհանուր կանոն մը
ընեն , որ իրենց տղաքը ուրիշներուն առջևը
ոչ գովեն ու ոչ նախատեն : Մէկ տղայ մը
պէտք է աղէկ գիտնայ՝ որ իր ծնողացը ամե-
նէն մեծ պատիժը անոնց տհաճութիւնն է ,

ու ամենէն բարձր հատուցումը անոնց սէրն
 է : Տղոց հատուցումը ընելը երևելի հար-
 կաւոր բաներուն մէկն է : Արբոր ծնողքնե-
 րը իրենց տղոցը հատուցում կընեն , պէտք
 է որ շատ զգուշութեամբ ու ընտրութեամբ
 ընեն . աղէկ չէ որ մէկ ծնողք մը իր տղին
 ըսէ , թէ որ ինձի հնազանդիս , կամ այս
 ինչ բանը ընելու ըլլաս նէ քեզի ասանկ բան
 մը կուտամ . ինչու որ ասանկ ըսելը տղէն
 հնազանդութիւնը ծախու առնել է , ու
 նաև տղան ալ ուրիշ անգամ պիտի ըսէ որ ,
 Աթէ սա բանը ինձի կուտաս նէ քեզի կը-
 հնազանդիմ . անոր համար շատ գէշ բան է
 որ ամենեկին պէտքը չէ ծնողքները այսպէս
 զրուցեն : Արդարև ծնողքները պէտք է ի-
 րենց մէկ կանոն մը ընեն որ ամենեկին մէկ
 մասնաւոր հնազանդութեան մը համար
 յատուկ մէկ հատուցում մը չընեն իրենց
 տղոցը , հապա անանկ կերպով մը անոնց
 տալու է , որ գիտնան թէ իրենց սովորա-
 կան հնազանդութիւններուն համար է որ
 աս հատուցումները կըլլան . այսինքն եր-
 բոր մէկ տղայ մը աղէկ բան մը կընէ , սովո-
 րաբար պէտք է հաճութիւն մը ցուցընել ա-
 նոր . բայց երբոր անհնազանդութիւն կը-
 նէ , անատենը պէտք է իր անհնազանդու-
 թեանը համար մէկ տհաճութիւն մը ըլլովի :

Մէկ ծնողք մը պէտքը չէ որ իր տղին ըսէ ,
 Թէ աս հատուցումները իրեն աղէկ կենցա-
 ղավարուածեանը համար կը լլան , հապա
 Թող տալու է որ երթայ ինքիրենը սորվի ,
 Թէ իր ծնողացը ընդհանուր կը թուածեան
 կանոնները բռնելուն համար է , որ աս հա-
 տուցու մները իրեն կը լլան :

Հինգերորդ բանը որ պիտի խօսվի :
 տղոց խաղալիկներուն , ու անոնց զբօսա-
 նացը վրայ է , որ առաւել հարկաւոր բա-
 ներ են :

Օնողքները պարտին միշտ գիտնալ , որ
 իրենց տղաքը խաղալ՝ ու խաղալիկ բաներ
 կուզեն . ու նաև չի պիտի կարծեն կամ ու-
 զեն որ իրենց տղաքը զգաստ ու անհոգ ըլ-
 լան տղայական բաներու վրայ՝ քառսուն
 տարեկան մարդոց պէս : Անխոհեմութիւն
 է Թէ որ մէկ մարդ մը Թող չի տար որ իր
 տղան ժամանակին խաղալու երթայ , ասի-
 կա երկուքին ալ դժուար կը լլայ , ծնողքին
 ալ՝ տղին ալ : Օնողքին , ինչու որ ինքը
 նեղութիւն քաշելէն կազատի երբոր անի-
 կա քիչ մը ժամանակ Թող տալու ըլլայ
 որ երթայ ինքիրենը խաղայ , տղին գէշ
 կը լլայ , ինչու որ ինքը արագ ու աշխոյժ չի
 կրնար ըլլալ՝ երբոր անոնք Թող չեն իտար
 իրեն երթալ խաղալու , ու անանկդան-

գաղ ու ծոյլ կրմնայ երբոր մեծնալու ըլ-
լայ : Աթէ ջանալու ըլլանք մէկ փոքր տղայ
մը կատարեալ մարդու պէս ընել , կերևայ
որ երբոր ինքը մեծնայ ու կատարեալ մարդ
մը ըլլայ , անատենը կարելի է թէ մէկ տղի
մը պէս պիտի ըլլայ անիկա :

Օնողքները պէտք է որ իրենց տղոցը
համար զանազան խաղալիկներ առնեն , ու
անոնց համար շատ տեսակ զըւարձալի բա-
ներ պատրաստեն : Առաւել պարզ ու ան-
վնաս խաղալիկներ պզտի տղոց համար ա-
սոնք են , մէկ քանի կտոր փայտ՝ քառակու-
սի կտրած , որ անոնցմով պատ , կամ տուն ,
և կամ ասոնց նման բաներ կը շինեն : Թող
ծնողքները աս տեսակ փայտ շինողներուն
երթան , ու քսան կամ քսանըհինգ կտոր
փայտ շինել տան , չորս մատնաչափ երկայ-
նութեամբ , երկու մատնաչափ լայնու-
թեամբ , ու մէկ մատնաչափ հաստու-
թեամբ , և ասոնցմէ՝ ի զատ հինգ կամ վեց
կտոր երկան փայտեր , տասներկու մատ-
նաչափ երկայնութեամբ , երկու մատնա-
չափ լայնութեամբ , ու մէկ մատնաչափ
հաստութեամբ , ու տղան անոնք մէկըմէկու-
վրայ դնելով՝ ու պատի կամ տունի ձև շի-
նելով գրեթէ մէկ անվախձան զըւարձուի
մը կիմանայ : Անծ տղոց համար որչափ որ

Հնար է նէ ան տեսակ օգտակար խաղալիկ-
 ները պէտք է առնելի , որոնցմով իրենց
 շատ օգուտ կը լայ : Աղջիկները որ կրնան
 բաւական կտր կարել , թող տալու է որ եր-
 թան ինքիրեննին պզտի աղջիկներ շինեն ,
 կամ ուրիշ տեսակ բաներ կարեն : Մանչե-
 րուն համար աղէկ է որ մուրճ չէ՛՛՛ ,
 կամ ուրիշ տեսակ պարզ գործիքներ առ-
 նելի . ինչպէս որ շատ կուրախանան ասանկ
 բաները գործածել . ու թող տալու է
 որ երթան փայտեր կամ տախտակներ
 կտրելով սնտուկ կամ ուրիշ բաներ շինեն ,
 և այլն : Թէպէտ անոնց պատուիրելու է որ
 իրենց գործիքները տանը մէջ գետնին վրայ ,
 կամ ուրիշ վնասակար կերպով ամենեին
 չի գործածեն : Ամառ ժամանակ պարտէ-
 զին մէկ կողմը անոնց տալու է , իբրև թէ
 իրենցը եղածի պէս , որ երթան փորեն ,
 ու ծաղիկներ տնկեն իրենց զըւարձութեա-
 նը համար , ու նաև ծնողքները իրենց տը-
 ղոցը բնութեանը յարմար աս տեսակ բա-
 ներ պէտք է խորհին , որ երթան ինքիրեն-
 նին խաղան ու ուրախանան : Արբոր մէկ
 ընտանիքի մը մէջ մէկ քանի տղաքներ կը
 գտնուիին , անոնց ամէն մէկուն խաղալիկ-
 ները պէտք է զատ ըլլալ , ու թէ որ հնար
 է նէ անոնց խաղալիկներուն վրայ իրենց

անուննին թող գրվի, կամ ուրիշ մէկ նշան մը ըլլայ, որ ամէն մէկը շուտով իրենը գտնայ: Մտորքները իրենց տղոցը համար ասանկ խաղալիկներ պատրաստելով, պիտի տեսնան թէ որչափ գէշ քաներու հետեւ ելին, ու գէշ սովորութիւններ ստանալէն ետ պիտի կենան անոնք:

Արբոր մէկ տղայ մը անհնազանդութիւն կրնէ, շատ ժամանակ մէկ օգտակար պատիժ մըն է, եթէ անոր ձեռքէն իր սովորական խաղալիկները առնուի: Մտորք մը պէտք է մէկ առանձին տեղ մը յատկացրնէ տանը մէջ, որ տղաքը իրենց խաղալիկները չի գործածելու ժամանակնին հոն դնեն, ու տրոցն ալ ըսելու է որ երբոր իրենց խաղալիկը լըմընայ, պէտք է որ միշտ անոնք իրենց գործիքները նոյն յատկացեալ տեղը դնեն: Մէկ քանի զգուշութիւններ պէտք է ըլլայ աս քանիս վրայով. այսինքն, ծրնորքները պէտք է զգուշանան որ իրենց տղոցը համար խաղալիկ բաները չի շատցընեն. ինչու որ քիչը շատէն աղէկ է, ու նաև տղան ալ քիչով առաւել կրբաւականանայ ու երջանիկ կը ըլլայ, քան թէ շատ ունենայ ու չի գիտնայ ինչ ընելը: Տղան շատ ունենալով իր միտքը կը ցրվի, ու կրնեղանայ, ու նաև անհամբեր կը ըլլայ թէ արդեօք որուն հետ խաղայ:

Մտղքները նաև պէտք է որ իրենց տղաքը թող տան որ ինքիրեննին իրենց ուզածներնուն պէս երթան խաղան, ու ամենեին անոնց չի խառնըվին. բայց ան ժամանակը պէտք է անոնց զրուցել՝ ու թող չի տալ ան բանը, երբոր նոյն բանովը կամ իրենց կամ ուրիշներուն մէկ վնաս մը կը բերեն:

Ետ կրնեղանայ մէկ տղայ մը երբոր մէկը կերթայ ու միշտ կաւրէ տղին խաղալիկները, ու կը ցուցնէ թէ ի՛նչպէս պէտք է խաղալ, տղան առաւել իր յատուկ ճամբան կը սիրէ, քան թէ մէկի մը ցուցը ցածը: Բայց երբոր յարմար ժամանակը լայ, ծընողքները, կամ տղոց վրայի եղող վերակացուները կրնան անոնց ուրիշ ճամբաներ ցուցնել, որ տղաքը անոնցմով առաւել կը զուարճանան: Մտղքներէն ու տղաք նայողներէն ոմանք կրկարծեն թէ առանց իրենց օգնականութեանը մէկ տղայ մը ամենեին չի կրնար խաղալ. ու անոր համար միշտ կերթան ինքրդինքնին մէջ ձգելով տղին ձեռքի խաղալիկները յանդիմանութեամբ կառնեն, ու իրենց յատուկ ճանապարհը անոնց կը ցուցնեն, երբոր տղաքը իրենց ճանապարհը առաւել կը նտրեն, ու անոնց ջանքերը միայն տղաքը կը նեղեն, ու

անոնք անզգամ կրնեն : Չարմանալի բան է թէ մէկ տղայ մը որչափ ժամանակ ինքի-րենը կըխաղայ առանց մէկի մը նեղութիւն տալու , թէ որ յատկապէս ամէն խաղա-լիկները անոր համար պատրաստըվելու ըլ-լայ , ու խնդիր գլխուն թող արված ըլլայ :

Ա եցերորդ՝ ուրիշ մէկ երեւելի հարկա-ւոր բան մըն ալ կայ ծնողաց պարտքերուն մէջ . այսինքն պարտին գիտնալ անոնք թէ արդեօք իրենց տղաքը հարկաւոր կըթու-թիւններով ալ կըպատրաստըվի նկոր մի :

Ըստուած ամէն մէկ տղի մէյմէկ անմահ միտքեր տըւաւ , որ կարող են բան սորվե-լով յաւիտեանս մեծնալ . ու ասոր համար է որ մէկ տղայ մը գառէ մը , կամ այծէ մը , և կամ անասունէ մը կըտարբերի . ինչու որ անասունները միայն մարմնաւոր բնութիւն ունին , ու միայն ուտելու և իրենց մարմինը մեծցընելու , ու մեռնելու համար կապրին . բայց տղաքները միանգամայն մարմնաւոր ու մտաւոր բնութիւն ունին : Էիմայ թող ամէն ծնողք որոշէ թէ արդեօք աս երկու բնութիւններուն որն է առաւել հարկաւո-րը , մի թէ ան անասնական բնութիւնը մի որ քիչ մը ժամանակէն ետև ոչինչ պի-տի ըլլայ , թէ ան որ գրեթէ հրեշտակնե-րուն հետ հաւասար պիտի բարձրանայ , և

որ ամենեին չի պիտի մեռնի , ու յաւի-
տեանս պիտի ապրի : Արդեօք մէկ ծնողք
մը կրնայ մի ըսել թէ ինքը՝ իր պարտքը
իր տղոցը համար կրկատարէ , երբոր ա-
նոնք միայն հացով կրկերակրէ , ու հան-
դերձով կըզարդարէ , բայց միտքերնուն
վրայ ամենեին հոգ չի տանիր : Ասոր ներ-
հակ , պէտքը չէ՞ մի որ ամէն ծնողք գիտ-
նան թէ իրենց մէկ երեւելի ու առաւել հար-
կաւոր պարտքերնին է ան բնու թէանը վը-
րայօք առաւել հոգ տանիլ , որոնք որ Աս-
տուած անոնց տըւաւ : Իրաւ՝ պէտք է որ
անոնց մարմիննին կերակրովի , բայց ամէ-
նէն առաւել պէտք է անոնց միտքերնին մը-
տաւոր կըթու թիւններով զարդարովի : Ե-
թէ մէկ ծնողք մը իր տղան միայն կերակրէ
ու հագովեցընէ , ան մարդը առաւել մէկ բան
մը ըրած չըլլար իր տղին , քան թէ ինչ բան
որ կրնէ իր ձիուն . բայց իր տղան մէկ ձիէ
մը աւելի յարգի չէ՞ մի : Եւտղ մէկ ծնողք
մը չի խորհի թէ իր պարտքը իր տղոցը հա-
մար կատարած կըլլայ , մինչև որ անոնք որ
և իցէ կերպիւ մտաւոր կըթու թիւններով
զարդարելու չըլլայ նէ : Ամէն տղայ մանչ
կամ աղջիկ՝ պէտք է կարգալ սորվին : Ո-
մանք կըխորհին թէ աղջիկները ամենեին
պէտքը չէ որ կարգալ սորվին , կամ թէ

անոնց միտքերնին գիտութիւնով զարգարվի : Աթէ ասանկ էր նէ , ինչո՞ւ համար Մատուած անոնց միտք տրւաւ , ուրեմն աղէկ էր որ ըսվեր թէ աղջիկները պէտքը չէ որ հաց ուտեն , ինչու որ անոնց կարգալ սորվիլ պէտքը չէ : Ինչպէս որ Մատուած մարմին տրւաւ , որ կըցուցընէ թէ անոնք պէտք է կերակրովին ու հոգ տարովին , անանկ ալ անոնց միտք տրւաւ , որ կըցուցընէ թէ անոնք պէտք են հոգ տարովին ու իմաստութեամբ զարգարովին : Աթէ Մատուած չուզէր որ աղջիկները կարգալ սորվին , կարծենք թէ անոնք անասուններու պէս պիտի ստեղծեր՝ միայն մարմինով , բայց առանց մտքի :

Միայն մէկ օրինակ մը բաւական է որ մեզ համոզէ թէ աղջիկները պարտին կարգալ սորվիլ , այսինքն է անոնք ազգին մէջը մայրեր պիտի ըլլան : Բիչ մարդիկ կան որ աղէկ գիտեն մայրերուն ունեցած զօրութիւնը թէ անոնք գիտուն ըլլան նէ , իրենց ազգն ալ գիտուն կըլլայ : Բայց քիչ մը խորհիլ ու քննել հարկաւոր է , որ տեսնանք թէ որչափ առաւել է մօրը զօրութիւնը իր տղոցը վրայ , քան թէ իրենց հօրը զօրութենէն : Աթէ մայրը տգէտ ըլլայ՝ գըրեթէ տղաքն ալ պիտի տգէտ ըլլան , թէ-

պէտ ամէն մարդու համար չէ աս, բայց իբրև
 ընդհանուր կանոն ասանկ է: Արբոր կը-
 տեսնանք որ մէկ ազգի մը մայրերը տգէտ
 են, նաև նոյն ազգն ալ տգէտ կը լլայ. անոր
 համար եթէ ամէն մարդ կուզէ որ իր ազգը
 բարձրանայ ու առաւել յարգի ըլլայ, պէտք
 է բաղձայ որ իր աղջիկները կարգալ սոր-
 վին ու կրթըվին: Օնողքներէն ոմանք կա-
 րող են իրենց տանը մէջ առանձին վար-
 ժապետ բռնել, որ շատ աղէկ բան է. բայց
 շատերը աս բանս չեն կրնար ընել, ու ա-
 սանկները պարտին շատ շնորհակալ ըլլալ,
 որ հիմայ այսքան դպրատուններ կան, ուր
 որ իրենց տղաքը կրնան խրկել: Աս բանս
 ամէն ծնողք պարտին գիտնալ, որ իրենց
 մէկ երևելի պարտքերնին է որ իրենց տղոցը
 ամէն բանէն առաւել կարգալ ու գրել սոր-
 վըցունեն, որ բաւական կարող ըլլան կար-
 դալու Սուրբ Գիրքը. որն որ Աստուած
 մարդասիրութեամբ մեզի տրւաւ, որ կար-
 դանք ու իր կամքը գիտնանք: Արդարև տը-
 ղոցը կարգալնուն գրելնուն ու աղէկ կրթը-
 վելնուն առաջին ու մեծ պատճառը աս է, որ
 անոնք Աստուծոյ կամքը գիտնան ու կատա-
 րեն, ու նաև Աստուծոյ թագաւորուէր
 համար պատրաստ ըլլան: Արբոր տղաքնե-
 րը դպրատուն կը խրկըվին, կամ թէ տանը

մէջ առանձին վարժապետ կունենան, պէտք է որ նոյն վարժապետին ու ծնողացը իշխանութիւնը տղոցը վրայ մի և նոյն ըլլայ, որ տղաքը գիտնան թէ իրենց ծնողքները ու վարժապետնին մի և նոյն դիտաւորութիւնը ունին իրենք աղէկ կը թելու համար . բայց երբոր ծնողքներուն ու վարժապետներուն մէջ տեղը տարբերութիւն ըլլալու ըլլայ, և իրարու հետ չի միաբանին, ան ժամանակը տղան շատ գէշ կը լլայ :

Աս կը խորհիմ որ աս փոքրիկ գիրքս լըցընեմ տղոց կը թութեան վրայօք՝ մէկ քանի երեւելի խրատներով, որոնք գիտնալը շատ հարկաւոր է :

Մ. Ռաջին, Օ՛նողքները պարտին անշուշտ գիտնալ որ իրենք մէկ օրինակ մըն են իրենց տղոցը : Օ՛նողքները ի՛նչ բան որ ընեն՝ եթէ աղէկ և եթէ գէշ, տղաքը նոյնը կը սորվին . ու անանկէ մարդուս բնութիւնը, որ տղաքը առաւել շուտով գէշին կը վազեն քան թէ աղէկին : Մ. սիկա կը ցըցունէ որ ծնողքները որչափ զգուշ պարտին ըլլալ իրենց վարքերուն մէջը : Մ. մենեին աղէկ չէ որ մէկ ծնողք մը իր տղոցը ըսէ թէ՛, Աս ինչ բան որ ըսեմ ան ըրէք, բայց ինչ բան որ ընեմ՝ ան մի ընէք : Օ՛նողքը ինչ բան որ ըսէ, անոնք ընդհանրապէս անոր ըրածը

տեսնալով նոյնը պիտի ընեն , մանաւանդ ե-
 թէ անիկա գէշ բան ընելու ըլլայ : Նոողք-
 ները շատ ժամանակ աս կերպով իրենց տը-
 ղոցը շատ բաներ կը սորվեցունեն : Աթէ է-
 ըիկ մը ու կնիկ մը իրարու ինչ տեսակ գէշ
 կիրքեր ցուցնելու ըլլան , տղաքն ալ շու-
 տով նոյն բանը պիտի սորվին . եթէ անոնք
 կռիւ ընելու ըլլան , անոնք ալ պիտի ընեն .
 եթէ սուտ խօսելու ըլլան , անոնք ալ պիտի
 խօսին : Արբեմն շատ ծնողքներ իրենց տը-
 ղոցը գէշ բնաւորութիւններուն համար
 օր ըստ օրէ կը բարկանան , որ նոյն գէշ բը-
 նաւորութիւնը իրենք անոնց սովեցուցե-
 են իրենք անոնց չար օրինակ ըլլալովնին :
 Աթէ ծնողքները կուզեն որ իրենց զաւկը-
 ներուն բնաւորութիւնը անուշ ու հաճելի
 ըլլայ , թող աս միտքերնին պահեն որ նախ
 պարտին իրենք իրենց սրտին մէջը նոյն բը-
 նաւորութիւնը ստանալ : Ահ որ կուզեն որ
 իրենց զաւկըները իրարու մարդասիրու-
 թիւն ցուցնեն , նախ իրենք պարտին ի-
 րարու վրայ մարդասէր ըլլալ . եթէ կու-
 զեն որ իրենց տղաքը համեստ ու պարկեշտ
 ըլլան , նախ իրենք պէտք է որ համեստու-
 թիւն ու պարկեշտութիւն ցուցնեն ան-
 ոնց իրենց վարքերնուն մէջը :

Արկրորդ , ծնողքները յատկապէս պար-

տին հոգ տանիլ իրենց զաւկըններուն վրայ ,
 ճշմարտութիւնը ունակութիւն ընել տա-
 լու անոնց :

Եսաբէութիւնը և սուտ խօսիլը շատ չար
 ու գէշ բան մըն է : Սուրբ Գիորգը կըսէ թէ
 անոնք խիստ մեծ մեղքեր են : Հոն մեզի ըս-
 ված է թէ , “ Բոլոր սուտ զրուցներուն բա-
 ժինը ան լիճին մէջը պիտի ըլլայ , որ կրակով
 ու ծծումբով կը վառի : ” Եւ սակայն չի կայ
 մէկ ուրիշ մեղք մը որ սուտին պէս յաճախ
 գործածվի . ու ամենեին մէկը սուտ խօսած
 ժամանակը չի ամչնար , և իր խղճմտանքը
 ինքը չի տանջեր : Տղոցը սուտ խօսելուն ու
 խտրէութիւն ընելուն ճշմարիտ պատճառը
 իրենց ծնողքներն են , որ անոնց պզտիկուց
 սուտ խօսիլ կը որովեցընեն : Երգեօք Գրչափ
 անգամ ծնողքները իրենց տղոցը վախնալու
 պատմութիւններ կըսեն՝ որ անոնք իրենց
 հնազանդեցունեն , որ ան պատմութիւն-
 ներուն մէկն ալ ճշմարիտ չէ , ու նաև իրենք
 ալ դիտեն որ բոլոր ըսածնին սուտ է . և աս
 կերպով տղաքները շուտով սուտ խօսիլ
 կը սորվին : Երբոր մէկ տղայ մը անհնազան-
 դութիւն կընէ , հայրը Գրչափ անիկա կը-
 վախցընէ , ըսելով թէ , “ Ես չեմ հիմայ քեզի
 ինչ պիտի ընեմ , որ ամենեին բան մըն ալ
 ընելիք չունի . և եթէ ընել ուզէ ալ նէ չի

կրնար ընել . ու աս կերպով տղան շուտով
 կըսորվի որ իր ծնողացը խօսքերուն բոլորը
 ոչինչ և սուտ է , ու ինքն ալ կըսկըսէ սուտ
 խօսիլ , ու խաբէուի ընել : Հատ ժամա-
 նակ կըպատահի որ երբոր հայրը իր տղան
 պիտի պատժէ մէկ յանցանքի մը համար ,
 մայրը տղան պահպանելու համար շատ սու-
 տեր կըխօսի , ըսելով թէ , Ան բանը ան չը-
 րաւ , հապա ուրիշ մէկը ըրաւ որ հիմայ
 դուրս գնաց , և այլն : Հիմայ ասիկա տղին
 էվէլ էվէլօք սուտ խօսիլ սորվեցունել է :
 Անչպէս մէկ հայր մը կամ մայր մը կրնայ
 սուտ խօսիլ , եթէ գիտնայ թէ սուտ զրուց-
 ները իրենց մասնուբաժինը կրակով ու ծը-
 ծումբով վառած լիճին մէջը պիտի ունենան :
 Արդեօք ծնողքները կուզեն մի , որ իրենց
 տղաքը անանկ մէկ տեղ մը ըլլան , ուրտեղ
 որ ասանկ սոսկալի բաներ կան : Արդարեւ
 չեն ուզեր , բայց թող գիտնան որ եթէ աս
 կերպով իրենց տղոցը հետ վարվելու ըլլան ,
 անշուշտ անոնք ան տեղին համար պատ-
 րաստած կըլլան : Ծնողքներէն ոմանք ալ
 յայտնի կըպատուիրեն իրենց տղոցը , որ
 սուտ խօսին : Արբոր մէկ մարդ մը իրենց
 տունը կերթայ ու իրենք կըկանչէ , և անոնք
 չեն ուզեր ան մարդուն տեանըվիլ , կըսեն
 իրենց տղոցը որ ըսեն թէ Հոս չեն , անոնք

դուրս ելան : Անտարակոյս տղան գիտէ որ
 ասիկա մէկ սուտ մըն է , ու անկէ ետեւ ինքն
 ալ կըսկըսէ անոնց պէս ընել : Արնայի
 քանի մը ուրիշ օրինակներ ալ տալ՝ որ ցու-
 ցընէին թէ արդարեւ ծնողքներն են իրենց
 տղոցը սուտ խօսիլ սորվեցունող . բայց
 հիմայ այսքանը բաւական է , ու աս տեսակ
 բաները բոլորովին գէշ բաներ են , որոնցմէ
 պարտին զգուշանալ ծնողքները : Ան ոչինչ
 խօսք է որ կըսեն թէ, Սենք ինչ ընենք, սուտ
 խօսիլը մարդկանց սովորութիւն եղած է ,
 ու սուտ չխօսելով մէկ մարդուն յանցանքը
 չի քիչնար : Աստուած մեզի կըսէ թէ, ամե-
 նեին սուտ չի խօսինք , բայց աշխարհս մեզի
 հրաման կուտայ թէ որչափ ուղենք այնչափ
 խօսինք . հիմայ աս երկուքին որի՞ն պիտի
 հնազանդինք . Աստուծոյ մի , եթէ աշ-
 խարհին : Աշխարհ մեզի կըսէ որ եթէ
 սուտ խօսելու ըլլանք , մեր երկրաւոր շահը
 առաւել պիտի էլեւցընենք . ու Աստուած
 կըսէ որ՝ եթէ սուտ խօսելու ըլլանք , հոգի-
 նիս պիտի կորսընցունենք . հիմայ աս եր-
 կուքին որը առաւել աղէկ է , մեր շահը մի
 էլեւցընել , եթէ հոգինիս մի փրկել : Սուտ
 խօսիլը շատ յիմարական ու գէշ սովորու-
 թիւն մըն է , ու բարի ծնողքները պարտին
 ջանալ՝ որ և իցէ հնարաւոր կերպով աս

գէշ սովորութիւնը աւրել : Մէկ մեղաւոր մարդ մը երբոր կրճերանայ, անիկա դարցընելը դժուար բան է, բայց տղոցը ժամանակին սորվեցունելը շատ դիւրին բան է. անորհամար ծնողքները պարտին շատ զգուշ ըլլալ որ իրենց տղոցը սուտ բաներ չի զրուցեն, ու նաև իրենք ալ ուրիշները խաբելէն մէկ դի կենան : Ընչուշտ ծնողքները պէտք է որ միշտ ճշմարտութեան հետևին, ու նաև երբոր իրենց տղաքը սուտ կրխօսին՝ անոնք առանց պատիժի չանցունեն :

Երբորդ, ծնողքները չեն կրնար որ իրենց տղաքը բոլորովին չար ընկերներէն ետ պահեն, ասորհամար անոնց առաւել աղէկ է որ՝ որչափ հնար է նէ իրենց տղաքը փողոցներէն ետ պահեն : Արդեօք որչափ զուարճալի բան է երբոր աս տեսակ ծնողքները կրտեսնանք՝ որ իրենց տղաքը աս կերպով զգուշութեամբ կրպահեն, ու նաև մէկ րոպէ մը անգամ անոնք առանց մէկի մը դուրս չեն հաներ. երբոր իրենց տղաքը դպրատուն խրկելու ըլլան, անոնք կամ մէկ հաւատարիմ ծառայի մը հետ կրխրկեն, կամ իրենք հայրերը կրտանին. որ աս կերպով տղաքները շատ գէշ բաներէն ետ կրմնան : Երբոր ծնողքները իրենց տղաքը ազատաբառ

Թող կուտան՝ որ դուրս ելլեն, անոնք շատ
 գէշ ընկերներ կրգտնան. ու շուտով անոնց-
 մէ գէշ օրինակներ առնելով, կըսկըսեն
 ամէն տեսակ գէշ բաները ընել: Յիրաւի
 եթէ ծնողքները այսպէս իրենց տղաքը
 Թող կուտան, որ ինքիրեննին դուրս ել-
 լեն, չեն գիտեր թէ արդեօք ի՞նչ գէշ բա-
 ներու կը հետեւին կոր. կամ թէ ի՞նչ վիշտ
 ու նեղութիւն իրենց համար կը պատրաս-
 տեն կոր:

Չորրորդ, երբոր մէկ տղայ մը կամակո-
 րութիւն կընէ, ընդհանրապէս աղէկ է
 անանկները ինքիրեննին Թող տալ, ու
 ամենեին անոնց բան չի զրուցել: Արբոր
 մէկ տղայ մը աս վիճակին մէջն է, պէտքը չէ
 որ մէկ ծնողք մը անոր ասանկ ընելուն հա-
 մար ամենեին ինքը մէկ նեղութիւն մը
 իմանայ: () օրինակի աղագաւ, ըսենք թէ
 Պետրոսը մէկ բանի մը սրդողեցաւ, ու սե-
 ղանը չի գնաց հաց ուտելու, բայց մայրը
 շատ ստիպեց ըսելով թէ, Մի՛ ըներ աս
 բանը տըղաս, եկ՛ո՛ հաց կեր: Պետրոսն ալ
 իր մօրը իրեն համար ըրած հոգը տեսնալով՝
 ևս առաւել չուզեց գալ. գլխաւորապէս իր
 յամառութիւնը գլուխ հանելու համար:
 Բայց հիմայ առաւել աղէկ պիտի ըլլար որ
 մայրը ըսեր թէ. Խիստ աղէկ ի՞նչպէս որ

կուզես այնպէս ըրէ , ու անկէ ետե պէտք էր ընտանիքը իրենց ճաշը ընէին , ամենեին տղին հոն ըլլալուն կամ չըլլալուն վրայօք հոգ չընելով . կարելի է անկէ ետե տղան ինքիրենը պիտի ամրջնար , ու ինքիր կամքովը շուտով սեղանը պիտի գար : Արբեմներբոր մէկ տղայ մը իր բարկութենէն աս կերպ բաներ կրնէ , ու կրսէ թէ Աս սեղանը չի պիտի գամ հաց ուտելու , ան ժամանակը շատ աղէկ բան պիտի ըլլայ , որ անոր ըսվի թէ , Շատ աղէկ , սեղանը գալու չես , ու անկէ ետե անիկա կամ մէկ ուրիշ սենեակի մը մէջ դնելու է , կամ նոյն տեղը հանդարտ նստեցունելու է մինչև որ իրենք հացերնին ուտեն , ու ան ալ երբոր ինքիրենը հաց ուտելու պատրաստ կըլլայ , ան ժամանակը թող տալու է որ ան ալ ուտէ :

Հինգերորդ , ծնողքները պարտին շատ զգուշանալ , որ չըլլայ թէ իրենց տղոցը մէկը մէկալէն էվէլ սիրեն , հապա բոլոր իրենց տղաքնին պէտք է որ մէկ նայվին . թէ աղջիկ ըլլան անոնք և թէ մանչ , թէ չափահաս և թէ փոքրիկ : Շատ անիրաւ բան է երբոր մէկ ընտանիքի մը մէջ մէկ տղայ մը միւսներէն էվէլ կըսիրվի : Արբեմն կըպատահի որ մէկ կանոնաւոր ընտանիքի մը մէջ եղող տղաքները մէջերնին վիճաբանութիւն մը

կըհանեն, ու ծնողքները նոյն վիճաբանութիւնը կսկըսեն որոշել : Ամէն ասանկ դիպուածներուն մէջ ծնողքները ամենեին կողմնականութիւն ընելով դատելու չեն : Արբեմն ոմանք իրենց տղոցմէն մէկը՝ միւսներէն էվէլ սիրելնուն, բոլոր անոր յանցանքները կընեն, մէկալները անոր տողը կըպատժեն . բայց ասիկա շատ գէշ բան է, ինչու որ իրենց տղաքը բոլորը մի և նոյն է . ու եթէ անոնք մէկը միւսէն առաւել սիրելու ըլլան, շատ գէշ բան ըրած կըլլան : Աս տեսակ ընթացքները նաև տղոցը մէջ ալ նախանձութիւն ու գէշ զգացումներ յառաջ կըբերէ : () Ծնողքներէն ոմանք ալ այնքան տգէտ են՝ որ յայտնի իրենց տղոցը կամ ուրիշներուն առջևը կըզրուցեն թէ, իրենց այս անուն տղան միւսներէն առաւել կըսիրեն . բայց ասիկա միայն տգիտութիւն չէ, հապա մեղք ալ է : Անոնք պէտք է որ իրենց տղաքը մի և նոյն սիրով սիրեն, մէկին կենցաղավարութիւնը ինչպէս կըսիրեն նէ, պէտք է որ միւսներուն ալ այնպէս սիրեն . եթէ մէկը մէկ յանցանքի մը համար պատժելու ըլլան, պէտք է որ միւսներն ալ նոյն յանցանքին համար պատժովին :

Ա եցերորդ, վերջի բանը որ պիտի զըրուցեմ, ընտանեաց աղօթք ընելուն վրայ է :

Շատ զուարճալի բան է երբոր մէկ հայր մը
 իր ընտանիքը ամէն իրիկուն կը ժողովէ ,
 ու աղօթք ընելով իրենց երևելի պարտքեր-
 նին Մատուծոյ կը հատուցանեն : Մտերևելի
 պարտքը ամէն ծնողք որչափ որ հնար է նէ ,
 առանց ձանձրանալու պէտք է որ կատարէ :
 Սեր երկնաւոր Հօրը բարիքները մեզի շատ
 է , որ ամէն օր մեր ընտանեացը համար կըն-
 դունենք , ու նաև անոր գթութիւններուն
 շատ կարօտ ենք : Ուրեմն արժան չէ՞ որ
 հանդերձ մեր ընտանեօքը Մատուծոյ բարե-
 րարութիւնը խոստովանինք , ու ան բարե-
 րարութիւնները շարունակելու համար ա-
 ղօթք ընենք : Աղօթք ընելը պէտք է շատ խո-
 հեմութեամբ ու խորհելով ըլլայ : Շատե-
 րը կան՝ որ իրենց աղօթքը շատ շաւտով կը-
 նեն , իբրև թէ աղօթք ընելը մէկ բեռ մըն է .
 որչափ հնար է նէ շուտով կը զրուցեն որ հոն
 տեղի կայնողները անգամ չեն կրնար հաս-
 կրնալ , ու նաև կերևայ թէ իրենք ալ չեն
 հասկրնար ինչ կը զրուցեն . բայց ասիկա ա-
 ղօթք ընել չէ : Արբոր կուզենք ուղիղ սքը-
 տիւ աղօթք ընել , պէտք է որ շատ խորհինք
 մեր ըրած աղօթքներուն վրայ , թէ արդեօք
 ինչ կը սենք կոր . ու նաև մեր ըսածը գիտ-
 նանք : Աթէ մէկ մարդ մը միայն խօսքերը
 շուտով արտաբերելու ըլլայ , ու ամենևին

անոնց նշանակութիւնը չի հասկընայ, ի՞նչ պէս աղօթք ընել կը լլայ ան, ուրեմն որ և իցէ ուրիշ կերպ ձայներ ալ հանելու ըլլանք, աղօթք ընել պիտի ըլլան, անանկ է նէ կըրնանք որ մէկ փայտէ մարդ մը շինել տար, որ մեզի համար ձայներ հանէ, ու այնպէս մեր տեղը աղօթք ընէ: Տայց Աստուած մեզմէ ուղիղ սրտով աղօթք ընել կըխնդրէ. ու երբոր մէկ մարդ մը ուղիղ սրտով աղօթք ընել կուզէ, անիկա պէտք է կամաց՝ ու շատ մտածութեամբ ընէ: Երբոր տղաքները ու ծառաները ընտանեաց հետ աղօթքի կըգտնըվին, պէտքէ սորվին որ շատ լուռ կենան, ու իրարու հետ ամենեին խօսք չընեն, մինչև աղօթքին վերջը. ու ամէն մէկը պէտք է լռիկ իր տեղը կայնի, ու չի պտըտի, չի խորաթէ, ու մէկ բան մըն ալ չընէ որ աղօթք ըսողին միտքը աղօթք ըրած ժամանակը չի շփոթի: Ետ աղէկ պիտի ըլլայ որ երբեմն ծնողքները երբոր յարմար ժամանակ ունենան, աղօթքին ի՞նչ ըլլալուն վրայօք իրենց տղոցը հետ խօսին, և թէ ինչ երևելի բան մըն է Աստուծոյ առջևը կայնիլ, որ բոլոր սրտերը կըքննէ:

Սերջապէս, հիմայ թող ամէն ծնողք շնորհակալ ըլլան Աստուծոյ տրված բարիքներուն, ու ջանան որ ինչ և իցէ կերպով


իրենց տղաքը միշտ շիտակ ճանապարհին
 մէջը ուղղեն : Մտուած հաւատարիմ ծը-
 նողաց շատ խոստումներ ըրաւ . ու ան ծը-
 նողքները որ հաւատարմութեամբ կրբաղ-
 ձան իրենց պարտքերնին իրենց տղոցը հա-
 մար գիտնալ ու ընել , անշուշտ թող Մ.ս-
 տուծոյ օրհնէնքը խնդրեն , որ իրենց վրայ
 ու իրենց տղոցը վրայ առատապէս խրկէ :
 Մտեսակ ծնողաց վրայ Մտուած առանց
 տարակուսի պիտի ստուգէ ինչ որ ինքը ը-
 սաւ , “ Սորվեցուցէք ձեր տղոցը որ ճամ-
 բան պէտք են երթալ . որ երբոր ծերանան
 անկէ չի զատվին ” :

Մ. Ե. Բ. Գ.

21

10
12







2014079136